Azg
Azg
armenian daily

Փետրուար
4
Հինգշաբթի
1993

օրաթերթ
9 տարի, թիւ 19 (271)
գինը 3ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Պատերազմ

Կանխագուշակում են ռազմական նոր գործողություններ

Երկուսուկես շաբաթ առաջ հայ-ադրբեջանական սահմանում հաստատված հարաբերական անդորրը դահիճնվում է: Այս գիշեր էական փոփոխություններ չեն եղել նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Ինչպես Հայաստանի, այնպես էլ ԼՂՀ-ի դաշտոնական աղբյուրները ծեռոպահ են մնում այդ վայրերի համար անսովոր բազմաբնույթ անդորրի դաշտանաներին առնչվող հարցեր հեռեւություններից: Մինչդեռ, դիտորդների կարծիքով, ադրբեջանական կողմի ռազմական գործողությունները կարող են վերսկսվել եղանակի տաքացման հետ: Ինչպես հայտնի է, այս ծմեռ ադրբեջանական ազգային բանակի ծեռնարկած բոլոր ռազմական գործողություններն ավարտվել են լիակատար ձախողմամբ: Միայն Ադրբեջանի ռազմաօդային ուժերը կորցրել են մոտ 10 ինքնաթիռ եւ երկնակի շատ ուղղաթիռ:

Սնարֆ

Երեւան-Էջմիածին

Առեւտրատնտեսական համաձայնագիր

Ինչպես «Նոյյան տաղան» գործակալության թղթակցին հայտնեց էկոնոմիկայի նախարարության միջազգային տնտեսական կապերի բաժնի վարիչ Վարդան Սարգսյանը, համաձայն 1993 թ. հունվարի 19-ին Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ վարչապետների մակարդակով ստորագրված առեւտրատնտեսական համաձայնագրի, կողմերը որոշել են աղրանքների կարեւորագույն տեսակների փոխադարձ առաքումներ իրականացնել: Հայաստանը դարտավորվում է Ղազախստան առաքել գունավոր մետալուրգիայի արտադրանքը, այդ թվում՝ ալյումինի եւ դղենձի գլանվածքներ, ալյումինե փայլաթիթեղ, քիմիական արդյունաբերության արտադրանքը՝ այդ թվում բեռնատար եւ մարդատար ավտոմեքենաների անվադողեր, էլեկտրաէներգիայի, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման եւ երկկողմ հարաբերությունների կարգավորման հարցերը:

Թուրքիան պատրաստ է բավարարել Հայաստանի խնդրանքը

Այս մասին երեկ կայացած բրիֆինգում հայտարարեց Հայաստանի նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: Ինչպես արդեն հաղորդել էինք, պրն. Լիպարիտյանը եւ նախագահի հատուկ բանագնաց Դավիթ Շահնազարյանը հունվարի 28-ից փետրվարի 1-ը աշխատանքային այցով գտնվում էին Թուրքիայում: Այցի հիմնական նպատակն էր հանդիպել Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին եւ քննարկել Հայաստանի նախագահի ու վարչապետի առաջարկները: Հունվարի 31-ի երեկոյան մեկ ժամ 25 րոպե տեւած զրույցի ընթացքում Հայաստանի նախագահի դաստիրակները պրն. Դեմիրելի հետ քննարկել են ցորենի մատակարարման, էլեկտրաէներգիայի, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման եւ երկկողմ հարաբերությունների կարգավորման հարցերը:

Թուրքիայի վարչապետը նախ հայտնել է, թե իր կառավարությունը կվերսկսի արդեն մոտ մեկ ամիս դադարեցված ցորենի մատակարարումը, որը հիմնականում կապված է եղել եղանակային բարդությունների հետ: Այնուհետեւ հայկական կողմին տեղեկացվել է նաեւ, որ Թուրքիան դաստաս է էլեկտրաէներգիա տրամադրել Հայաստանին, բայց ոչ այնչափ, որչափ նշված է մեր դիմումի մեջ: Թուրքական կողմի բացատրությամբ դա կապված է նաեւ տեխնիկական որոշ դժվարությունների, ինչպես նաեւ քաղաքական նեղրին հարցերի, այդ թվում թուրքական ընդդիմության հետ:

Թուրքական կողմը երկկողմ հարաբերությունները կապել է Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ, որն էլ իր հերթին կապում են զինադադարի հետ: Պրն. Լիպարիտյանը նշեց, որ իրենց ոլնդմամբ հենց երկկողմ հարաբերությունների հաստատումը կարող է նպաստել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը: Բայց հանուն դիվանագիտական հարաբերությունների Հայաստանը այդ խնդրում ոչ մի զիջում չի անի: Բրիֆինգի ընթացքում եղան նաեւ հարցեր, կապված ԵԱՀԽ-ի գործընթացի, հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Պրն. Լիպարիտյանը հայտարարեց, թե չի կարող լավատես լինել եւ ասել, որ այդ այցելությունը Թուրքիայի դիրքորոշումը հիմնովին կփոխի, բայց կարող է նշել, որ թուրքական կողմը դաստաստակամություն է հայտնել շարունակել երկկողմ խորհրդակցություններն ու հանդիպումները:

Պրն. Լիպարիտյանի Թուրքիա կատարած այցի մանրամասներին մենք կանդրադառնանք նաեւ առանձին հարցազրույցով, որը կտպագրենք մեր թերթի հաջորդ համարում: Ա.Հ.

Էջմիածին

Կամբոջայի կառավարական ուժերը հարձակվում են կարմիր խմերների վրա

Կամբոջայի կառավարական ուժերը, գարնանը ՄԱԿ-ի խաղաղապահության ուժերի ժամանումից ի վեր ամենալայնածավալ գործողությունների դիմելով, հարձակվեցին կարմիր խմերների կենտրոնատեղիի վրա: Կառավարական ուժերի այս հարձակումը գալիս է կարմիր խմերների ՄԱԿ-ի դահանջներին չենթարկվելու վաղորդայնին:

Արտաքսված դաղեստինցիները մերժում են Իսրայելի եւ Մ. Նահանգների առաջարկը

Իսրայելի կողմից արտաքսված դաղեստինցիները մերժեցին Իսրայելի այն առաջարկը, ըստ որի նրանցից 100-ը անմիջապես եւ 300-ը մեկ տարվա ընթացքում կվերադառնան Իսրայել: Իրենց մերժումով նրանք փաստորեն վտանգեցին արաբա-իսրայելյան խաղաղության բանակցությունները: Արտաքսված դաղեստինցիները իրենց այս որոշումը էվերակեցին վրանային ճամբարում, որտեղ ապրում են անցյալ դեկտեմբերի 17-ից ի վեր: Առաջարկը կատարվել էր անցյալ երեքշաբթի, Իսրայելի եւ ԱՄՆ-ի կողմից:

Հունաստանում անօրինական ձեւով ապրող արտասահմանցիներին բռում են

Հունաստանի ոստիկանությունը հայտարարեց, որ շուտով ամբողջ երկրի տարածքով գործողություններ են սկսվելու Հունաստանում անօրինական ձեւով ապրող հարյուր հազարավոր արտասահմանցիներին դուրս բռնելու նպատակով: Հունաստանում ապրող գործազրկության դաստաճառ է համարվում արտասահմանցիների գոյությունը:

Արտակարգ դրություն Յոհաննեսբուրգում

Հարավային Աֆրիկայի մայրաքաղաք Յոհաննեսբուրգում արտակարգ դրություն հայտարարվեց եւ ոստիկանությանը թույլատրվեց մարդկանց խուզարկել եւ ձերբակալել, այն բանից հետո, երբ սեւամորթ վարորդների ցույցերի հետեւանքով երկու մարդ էլ զոհվել: Աֆրիկայի ազգային ժողովը կառավարությանը ամբաստանեց, որ նա փորձում է ուշադրությունը շեղել ոստիկանության կողմից վարորդների նկատմամբ չարաշահումներ կիրառելու մասին մեղադրանքներից:

Ճնահոսքերի վտանգը չի անցել

Հյուսիսային Օսիայում առաջիկա երկու օրերին ճնահոսքերի վտանգը կդահպանվի: Հանրապետության օպերատիվաբանական կենտրոնի ներկայացուցիչ Զ. Օրեխովան «ԻՖ»-ին հայտնեց, որ ներկայումս լեռներում ձյուն է կուտակվում, եւ ճնածածկույթի հաստությունը չորեքշաբթի օրը գերազանցել է 110 սմ-ն: Արտակարգ իրավիճակների շտաբ բուժօգնության հանրապետական կենտրոնում հայտնեցին, որ հունվարի 27-ին ճնահոսքերի զանգվածային անկումն սկսվելուց հետո անցած օրերին լեռնափրկարարները կենտրոն են բերել տարբերային աղեից տուժածների 23 դիակ:

Ճապոնիա

Հրեակոծվել են Շուռնուխի դիրքերը

Ինչպես Գորիսից հաղորդում է մեր թղթակից **Հասմիկ Բաբաջանյանը**, փետրվարի 2-ին, ժամը 13-ին Ադրբեջանի Ղուբաթլիի շրջանի տարածքից հրեակոծվել են Շուռնուխ գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Տեղի ինքնապաշտպանության շտաբից հաղորդում են, թե հրետակոծությունն ընդմիջումներով տեւել է երեք ժամ: Նույն օրը երեկոյան ժամը 21-ին ադրբեջանական Մազմազակ ռազմական հենակետից գնդակոծվել են նաեւ Կոռնիձորի պաշտպանական դիրքերը եւ Լաչինի մարդասիրական միջանցքը: Հայկական ինքնապաշտպանության ուժերը ստիպված են եղել դիմել պատասխան գործողությունների: Ուշ գիշերին բենզամ կրակը դադարել է: Հայկական կողմից տուժածներ չկան: Ինչպես տեղեկացանք ավելի ուշ, երեկ ժամը 15-ին Կոռնիձորի պաշտպանական դիրքերի հրետակոծումը վերսկսվել է:

Ինչպես հաղորդում են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից, երեկ եւ նախորդ գիշեր Հայաստանի սահմանամերձ մյուս շրջաններում ռազմական լուրջ գործողություններ չեն արձանագրվել: ■

Սահման

Հանդիպում Հայաստանի եւ Նախիջեւանի սահմանում

Ինչպես արդեն հաղորդել ենք, փետրվարի 2-ին հայ-նախիջեւանյան սահմանում տեղի է ունեցել Հայաստանի եւ Նախիջեւանի տեղական իշխանությունների եւ ռազմական գերատեսչությունների ներկայացուցիչների հերթական հանդիպումը: Հայաստանի պաշտպանության նախարարությունում «Սնարֆ»-ի թղթակցին փետրվարի 3-ին հայտնեցին, որ բանակցությունների մասնակիցները քննարկել են կողմերին հետաքրքրող մի շարք հարցեր: Հայաստանի պատվիրակությունը մասնավորապես իր նկատառումներն է շարադրել ռազմավարական որոշ կարեւոր բարձունքներից զինված կազմավորումների հետքաշման եւ սահմանամերձ գոտում զինվորական պահակակետերի տեղակայման վերաբերյալ, սկսել երկու հանրապետությունների սահմանամերձ շրջանների միջեւ աղրանքափոխանակում, ինչպես նաեւ Հայաստանի, Նախիջեւանի եւ Իրանի միջեւ տրանսպորտային հաղորդակցություն: ■

Երեկ Երեւան-Փարիզ ուղերթով մեկնեց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսը: Նորին սրբությունը Փարիզից կանցնի Ժնեւ, խորհրդակցական հանդիպում ունենալու Ադրբեջանի եւ Կովկասի մուսուլմանների հոգեւոր ղեկ Շեյխ ուլ Իսլամ Ալլահ Շուքյուր Փաշազադեի հետ: Սպասվում է համատեղ մի հայտարարություն երկկողմանի անձնախաղաղման գինադադարի կոչով: Վերադարձը Հայրապետին ուղեկցում են Սայր աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզարյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը եւ ՀՅ Գերագույն խորհրդի դատավոր Ռաֆայել Պապայանը:

digitised by A.R.A.R.@

Կարծիք

Ելիր համաձայնական կառավարություն է

Հայաստանի խորհրդարանը վերջին օրերին արտահերթ նիստ գումարելով ձեռնամուխ էր եղել Հայաստանի Հանրապետության 1993 թ. սոցիալ-տնտեսական ծրագրի ու բյուջեի քննարկումներին: Երկար ժամանակ տրված այդ ծրագիրը վերջապես բերվում էր խորհրդարան եւ հանձնվում պատգամավորների դատին: Ծրագրի հեղինակ էր համարվում փոխվարչապետ Հրանտ Բագրատյանը, որն էլ ներկայացնում եւ պաշտպանում էր այն: Վարչապետ Խոսրով Հարությունյանը շեշտում էր, որ 1993 թվականը դժվարությունների, հիասթափությունների եւ որոնումների տարի է լինելու:

Կառավարության նախագծի ընդունմամբ խորհրդարանում երեք մոտեցում կար. ընդունել, մերժել եւ կամ վերադարձնել վերամշակման: Թվում էր այդ երթանակներում էլ ընթանալու էին քննարկումները: Բայց պատահեց հիշ հավանականը: Փետրվարի 1-ի նիստում, երբոր ունենալով խորհրդարանում վարչապետը ի լուր ամենի հայտարարեց, որ սկզբունքային տարաձայնություններ ունի փոխվարչապետի հետ: Նա հայտնեց, որ Հրանտ Բագրատյանը «շոկային թերապիայի» ջատագովն է, իսկ ինքը կարեւորում է սոցիալական ուղղվածությունը:

Փետրվարի 2-ի նիստում պատահեց մի այլ հիշ հավանական բան. նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ «տեղի է ունեցել արտառոց դեպք, որը չունի նմանը համաշխարհային պատմության մեջ», երբ կառավարության ծրագիրն դեմ լինելով, վարչապետը խորհրդարանին կոչ է անում քվեարկել դրա օգտին: Եւ իսկապես արտառոց, միայն թե բաղաքական գործընթաց ապրող երկրներում, որտեղ հասակ են գործում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ:

Նախագահի անակնկալ հայտարարությունը խորհրդարանում երեք մոտեցում կար. ընդունել, մերժել եւ կամ վերադարձնել վերամշակման: Թվում էր այդ երթանակներում էլ ընթանալու էին քննարկումները: Բայց պատահեց հիշ հավանականը: Փետրվարի 1-ի նիստում, երբոր ունենալով խորհրդարանում վարչապետը ի լուր ամենի հայտարարեց, որ սկզբունքային տարաձայնություններ ունի փոխվարչապետի հետ: Նա հայտնեց, որ Հրանտ Բագրատյանը «շոկային թերապիայի» ջատագովն է, իսկ ինքը կարեւորում է սոցիալական ուղղվածությունը:

Փետրվարի 2-ի նիստում պատահեց մի այլ հիշ հավանական բան. նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ «տեղի է ունեցել արտառոց դեպք, որը չունի նմանը համաշխարհային պատմության մեջ», երբ կառավարության ծրագիրն դեմ լինելով, վարչապետը խորհրդարանին կոչ է անում քվեարկել դրա օգտին: Եւ իսկապես արտառոց, միայն թե բաղաքական գործընթաց ապրող երկրներում, որտեղ հասակ են գործում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ:

Նախագահի անակնկալ հայտարարությունը խորհրդարանում երեք մոտեցում կար. ընդունել, մերժել եւ կամ վերադարձնել վերամշակման: Թվում էր այդ երթանակներում էլ ընթանալու էին քննարկումները: Բայց պատահեց հիշ հավանականը: Փետրվարի 1-ի նիստում, երբոր ունենալով խորհրդարանում վարչապետը ի լուր ամենի հայտարարեց, որ սկզբունքային տարաձայնություններ ունի փոխվարչապետի հետ: Նա հայտնեց, որ Հրանտ Բագրատյանը «շոկային թերապիայի» ջատագովն է, իսկ ինքը կարեւորում է սոցիալական ուղղվածությունը:

Փետրվարի 2-ի նիստում պատահեց մի այլ հիշ հավանական բան. նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ «տեղի է ունեցել արտառոց դեպք, որը չունի նմանը համաշխարհային պատմության մեջ», երբ կառավարության ծրագիրն դեմ լինելով, վարչապետը խորհրդարանին կոչ է անում քվեարկել դրա օգտին: Եւ իսկապես արտառոց, միայն թե բաղաքական գործընթաց ապրող երկրներում, որտեղ հասակ են գործում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ:

Տեսություն

ՈՎ Է ԼԻՆԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Այն բանից հետո, երբ փետրվարի 2-ին ՀՀ ԳԽ արտահերթ նստաշրջանի առավոտյան նիստում հանրապետության նախագահը հայտարարեց վարչապետ Խոսրով Հարությունյանի հրաժարականի մասին, հարց առաջացավ, թե ո՞վ է լինելու Հայաստանի նոր վարչապետը: Փորձենք համառոտակի վերլուծել ենթադրվող հավակնորդների հնարավորությունները:

Մի շարք դիտորդների եւ քաղաքագետների կարծիքով, կառավարության ղեկավարի պաշտոնի համար առավել իրական հավակնորդներից մեկը ներկայիս 35-ամյա փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանն է: Անցած 2.5 տարվա ընթացքում, այն ժամանակվանից, երբ բոլորին անծանոթ տնտեսական գիտությունների թեկնածու Հրանտ Բագրատյանը նորընտիր խորհրդարանի կողմից ընդունված տնտեսական օրենքների մեծ մասը: Նրա անմիջական ղեկավարությամբ են ձեւավորվել Հայաստանում տնտեսական բարեփոխումների իրականացման հաջողությունները, բայց եւ իմն է կրում այդ գործընթացում կատարված սխալների ողջ պատասխանատվությունը: Մասնավորապես, անցյալ տարվա աղդիլի վերջին խորհրդարանը չհաստատեց «Հայաստանի տնտեսական զարգացման հիմնական դրույթները», այսինքն տնտեսության զարգացման ստրատեգիական ծրագիրը՝ ծնված նրա նախարարությունում: Բացի դրանից, 1993 թ. ծրագիրը, որը փաստորեն մերժվեց խորհրդարանի կողմից, դարձյալ պատրաստված էր նրա ղեկավարությամբ: Բագրատյանն անձնական լավ փոխհարաբերություններ է Ռուսաստանի նախկին վարչապետ Եգոր Գայդարի հետ, իսկ նրանց հետ նրան նման հայացքներ ունի: Իմն է, որ միշտ աշխատում է Միջազգային վալյուտային հիմնադրամի, Վերականգնման եւ զարգացման միջազգային բանկի, Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական տնտեսական համագործակցության ներկայացուցիչների հետ: Էկոնոմիկայի նախարարությունը հաճախ անվանում են «կառավարություն կառավարության ներսում», քանի որ Նախարարների կաբինետի ոչ մի, բեկուզ չնչին կարեւորություն ունեցող որոշում չի ընդունվում առանց փոխվարչապետի համաձայնության: Ըստ երեւույթին նա հաճախ փորձում է ընդգրկել անընդգրկելին: Վարչապետ դառնալու դեպքում նա ստիպված կլինի կրել կառավարության գործունեության ողջ պատասխանատվությունը, ինչից նա մինչեւ այժմ կարողանում էր խուսափել: Ըստ ամենայնի, նա ստիպված կլինի նաեւ բացատրություն տալ մի ամիս առաջ իրավապահ մարմինների հետ ինչ տեղակալ Հայկ Մարգարյանի կարգակցությամբ, որը մեղադրվում է «Հայաստանից գունավոր մետաղների դուրս հանման համար պարտքի լիցենզիաներ տալու» մեջ: Բագրատյանի թեկնածությունն ամենայն հավանականությամբ կաջակցության ՀՀԴ-ն, որի անդամն է նա: Շատ լրագրողներ նրան համարում են Հայաստանում անցկացվող տնտեսական ռեֆորմի հայրը, սակայն համաձայնորեն կարելի է ասել, որ «հայկական Բալցերովիչ» նա դեռ չի դարձել: Նրան վարչապետի պաշտոնում նշանակելու դեպքում, կարելի է ասել, որ նախորդ վարչապետների ժամանակ կաբինետի փաստացի ղեկավար վերջապես այդպիսին կդառնա դեմ յուրն: Բացառված չէ, որ Բագրատյանի նշանակումը դժգոհություն կառաջացնի Հայաստանի գործարար աշխարհի ներկայացուցիչների շրջանում:

Այս պաշտոնի երկրորդ առավել հավանական հավակնորդը ղեկավարի նախարարի ներկայիս պաշտոնակատար եւ պաշտպանության նախարար, նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը: Բացառված չեն նաեւ աշխատանքի փորձ ունենալով եւ իր նոր պարտականությունները բավականին հաջող կատարելով Մանուկյանը Բագրատյանի նկատմամբ ունի այն առավելությունը, որ ի տարբերություն նրա, ավելի մեծ հնարավորություններ ունի կառավարական ծրագրի եւ բյուջեի հաստատման դեպքում խորհրդարանի պաշտպանության հարցում: Սակայն նման պաշտպանության փոխարեն Մանուկյանը նախագահից կարող է պահանջել սենիական կաբինետի կազմավորման իրավունք: Այս դեպքում, ամենայն հավանականությամբ նախարարական պորտֆելների մի մասը կառաջարկվի ընդդիմության ներկայացուցիչներին: Այս ամենը կնշանակի կուրսի ամբողջական կամ մասնակի փոփոխություն, ինչին նախագահը կհամաձայնի (եթե ընդհանրապես համաձայնի) մեծ դժվարությամբ: Չնայած միանգամայն հավանական է, որ Վազգեն Մանուկյանը չհամաձայնի գլխավորել կառավարությունը, քանի որ նա շատ լավ հասկանում է, որ փաստորեն պատերազմող երկրի համար իր պարտականությունները լավ կատարող պատասխանատվության նախարարն ավելի մեծ նշանակություն ունի, քան վարչապետը: Բացի դրանից, աշխատելով հարաբերականորեն սահմանափակ տեղամասում, նա շարունակում է դանդաղ, բայց ուղղագծորեն վերականգնել իր նախկին վարկը, ինչը կարեւոր է նրա համար, ոչ այնքան հեռու նախագահական նոր ընտրությունների նախաշեմին:

Հաջորդ թեկնածուն, որի մասին շատ հաճախ խոսվում է կուլուարներում, այժմ «Հայէլեկտրամեքենա» ԱՄ գլխավոր տնօրեն Կարեն Դեմիրճյանն է: 62-ամյա Դեմիրճյանը, գլխավորելով հանրապետությունը մոտ մեկուկես տասնամյակ, պետական եւ արտադրական կառավարման առանձնահատուկ փորձ ունի, շատ լավ գիտի ժողովրդական տնտեսությունը եւ պատասխանություն կունենա հանրապետության ձեռնարկությունների տնօրենների կողմից: Եւ վերջինը նրա թեկնածության վերաբերյալ: Ըստ ամենայնի, նա եւ հանրապետության ղեկավարությունը իրար նկատմամբ անձնական վիրավորանքի, բռնությունի եւ վրեժի զգացմունքներ չեն տածում: Այդ պատասխանում նշանակելու դեպքում նա դժվար թե փորձի խախտել արտաքին քաղաքականության հիմքերը եւ խոշոր բարեփոխումների գործընթացին: Ամբողջությամբ այն է, թե կնշանակի՞ արդյոք նախագահը երեկվա «ճամարտ ինինյանին» կառավարության ղեկավարի պաշտոնում:

Դակաս հնարավոր է նախագահի մերձավոր շրջապատից որեւէ մեկի նշանակումը: Բացառված չեն Արկադի Վայսբերգ գլխավոր Միխայել Մինասբեկյանի, ինչպես նաեւ գործարար աշխարհում հայտնի Ա. Ասլանյանցի նշանակումները:

Վարչապետի պաշտոնում նշանակվելու բոլոր հնարավոր թեկնածուները Հրանտ Բագրատյանի նկատմամբ մի կարեւոր առավելություն ունեն, այն է՝ նրանք այս տարվա տնտեսական ծրագրի եւ բյուջեի նախագիծը խորհրդարանում «անցկացնելու» ավելի մեծ հնարավորություններ ունեն: Ով էլ որ լինի Հայաստանի նոր վարչապետը, կարելի է մի բան ասել. հանրապետության արտաքին քաղաքականությունը չի փոխվի:

ԵՏ

Բանակ

ԼՂՀ բնակիչները կարող են մասնակցել, եթե...

Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը հանձնարարական է տրել միլիի մեջլիսի ընտրությունների օրենքի նախագիծ: Ընտրությունները պետք է կայանան 1993 թ. մայիսին: Նախագծի համաձայն ազգային խորհրդարանում կլինի 121 պատգամավորական տեղ (ներկա խորհրդարանում կա 360 տեղ): 61 պատգամավոր կընտրվի մաժորիտար համակարգով (ըստ առավելագույն քվեների), 60-ը՝ կուսակցական ցուցակներով: Այդ փաստաթղթի հանձնայն, Լեռնային Ղարաբաղի բնակիչները նույնպես իրավունք ունեն մասնակցելու միլի մեջլիսի ընտրություններին, եթե իրենց համարում են Ադրբեջանի հաղորդակցի:

Նոր կոմիտե

Փետրվարի 1-ին Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը հրամանագիր է ստորագրել Նախարարների կաբինետին առընթեր մեծաբիզնեսության եւ փոխարկի հասուկ կոմիտեի ստեղծման մասին: Ինչպես հայտնեցին նախագահի մամուլի ծառայությունում, այդ կառույցի ստեղծման պատճառը Ադրբեջանի ազգամարդությունաբերական համալիրի բոլոր ձեռնարկությունների կենտրոնացման անհրաժեշտությունն է:

ԵՏ

Ադրբեջանն ինքնուրույն կտրի իր դրամը

Ադրբեջանի ղեկավարությունը մտադիր է գնել արժեքավոր թղթեր, դրոշմանիշների, վիզաների եւ անձնագրերի տպագրության սարքավորումներ: Դրա համար նախատեսվում է հատկացնել 12-15 միլիոն դոլար: Ադրբեջանական պատվիրակությունը Գերմանիայում բանակցություններ է վարում «Մակմիլեր» ֆիրմայի հետ սարքավորումներ գնելու համար: Ֆրանսիայում մանաքների մի խմբաթանակի տպագրության համար Ադրբեջանը վճարել է 17 միլիոն դոլար:

1993 թ. կընդունվի նոր սահմանադրություն

Ինչպես հայտարարել է Ադրբեջանի միլի մեջլիսի նախագահ Իսա Գամբարովը, 1993 թվականը հանրապետության համար կլինի անկախ պետության հինգարության տարի: Ըստ նրա, հենց այս տարի առաջին անգամ կընդունվի նոր դեմոկրատական սահմանադրություն եւ առաջին անգամ հանրապետությունում դեմոկրատական ճանապարհով կանցկացվեն խորհրդարանական նոր ընտրություններ:

Ղարաբաղում հանգիստը պահպանվում է. Ինչպես հաղորդում են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբից, փետրվարի 2-ին Ադրբեջանի Աղդամի շրջանում տեղակայված կրակակետերից կարճատեւ հրետակոծության են ենթարկվել Ասկերանի շրջանի Խանաբադ (Ասկերվազ) գյուղը եւ հայկական պատասխանական դիրքերը:

Գիտ

Հանրապետության նախագահը միջամտում է եւ հարցը հետաձգում

Երեկ՝ օր առաջ, փետրվարի 2-ին, երբ ՀՀ նախագահը հրաժարեցնել տվեց վարչապետ Խոսրով Հարությունյանին, ընդդիմությունը հանդարտվեցի թվում էր: Բացի այդ, հանրապետության նախագահը Խոսրով Հարությունյանին վարչապետի պաշտոնից հեռացնելով եւ կառավարության ղեկավարի պարտականությունները Հրանտ Բագրատյանի վրա դնելով, պատասխանատվությունը դրեց նրանց ուսերին

Պատմություն

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌ

Վերջին ամիսներին Հայաստանի եւ Ռուսաստանի քաղաքական կյանքում առանձնանում է հասկանալի ընդհանուր գիծ. երկու երկրներում էլ եռանդագին քննարկվում է Սահմանադիր ժողովի (ՍԺ) հրավիրման հարցը: Փաստարկները նույնն են. երկու երկրների խորհրդարանները (Ռուսաստանում համագումարը) ընտրվել են խորհրդային օրոք, նախկին օրենքներով, չեն արտահայտում ներկա քաղաքական իրողությունները, ուստի եւ իրավունք չունեն ընդունելու նոր սահմանադրություններ: Համընկնում են նաեւ երկու երկրներում ՍԺ-ի հրավիրման հակառակորդների փաստարկները: այդ երկրներում գործող իշխանության մարմինների դայմաններում ՍԺ-ն կդառնա իշխանության նոր, անօրինական մարմին, զուգահեռ իշխանություն եւ այլն: Բացի դրանից, առկա է Էստոնիայի եւ Լիտվայի օրինակը, որտեղ հին խորհրդարանները կարողացան ընդունել նոր սահմանադրություններ, ընդամենը դիմելով հանրաքվեի, որին կողմնակից են թե Երլինը եւ թե Տեր-Պետրոսյանը: Էլ չենք խոսում այն մասին, որ դեռ հարկավոր է ընդունել օրենքներ ՍԺ-ի ընտրությունների մասին, անցկացնելով այդ ընտրությունները, իսկ Սահմանադրությունը հարկավոր է ընդունել հետագայում չափ տուս:

Ընդամենը ծագում է ակնհայտ հակասություն: Եթե Ռուսաստանում ՍԺ-ի օգտին հանդես են գալիս արմատական բարեփոխումների կողմնակիցները՝ ժողովրդավարական Ռուսաստանը եւ դրան հարող շարժումները ու կուսակցությունները, արդա Հայաստանում հակառակն է: Ռուս ժողովրդավարներին առավել մոտիկ կանգնած ՀՀՇ-ն դեմ է ՍԺ-ին: Փոխարենը կոմկուսի հետեւորդ ժողովրդավարական կուսակցությունը կամ սեփականաշնորհման մոլի հակառակորդ ՀՀԴ-ն դաշտանում են ՍԺ-ի գաղափարը, այսինքն համադաշն են, օրինակ, Գալինա Ստարովոյտովայի հետ, որի հանդեպ արանք, մեղմ ասած, բարեհաճ չեն:

Հակասությունն իրականում թվացյալ է: Դժվար չէ տեսնել, որ ՍԺ-ի նկատմամբ բոլոր կողմերի վերաբերմունքը կանխորոշվում է միայն քաղաքական իրավիճակով: Բացառություն են կազմում, թերեւս, այն շարժումները, որոնք ՍԺ-ի օգտին հանդես են գալիս վաղուց եւ սկզբունքային նկատառումներով: Ռուսաստանում դա Ժողովրդավարական դաշինքն է (Վալենտինա Նովոդվորսկայա). Հայաստանում՝ ԱԻՄ-ը (Պարույր Հայրիկյան):

Ռուսաստանի համագումարի դահիճանողական մեծամասնությունը ՍԺ-ն համարում է իր ամենազորության դեմ ուղղված սպառնալիք: Իսկ ժողովրդավարները հույս ունեն ՍԺ-ի, ինչպես նաեւ հետագա խորհրդարանային ընտրություններում ստանալ զգալիորեն ավելի շատ քվեներ, քան կոմունիստների ուժեղ ճնշման դայմաններում անցկացված 1990 թ. ընտրություններում:

Նույնն է նաեւ Հայաստանի խորհրդարանի ընդդիմության վերաբերյալ: Շրջափակման հետեւանքով խորացած Հայաստանի ծանրագույն ճգնաժամը բարձրացրել է բոլոր ընդդիմադիր կուսակցությունների ոգեշնչը եւ նրանք հույս ունեն առաջատար դիրքեր գրաւնելու: ինչպես ՍԺ-ում, այնպես էլ արդագա խորհրդարանում:

Այնքան էլ դյուրին չէ ՀՀՇ-ի գործը: Երկու տարում այդ կուսակցությունը զրկվել է 1990 թ. օգոստոսին խորհրդարանում ունեցած անհնարաւոր առավելությունից: Դա այն բանի հետեւանքն է, որ դաշտամասնորների մի մասը հարել է ուրիշ խմբակցությունների, ուրիշներն էլ ընդդիմադիր դարձել են կառավարության կազմում եւ հրաժարվել դաշտամասնորական լիազորություններից: Ընդամենը ՀՀՇ-ն դաշտանում է արդեն այս տարի սահմանադրության առթիվ հանրաքվե. իսկ՝ արդա նոր նախագահական եւ խորհրդարանային ընտրություններ անցկացնելու նախագահ Տեր-Պետրոսյանի առաջարկությունը: Ըստ էության, սա ինքնասպան մարտավարություն է, քանզի ՀՀՇ-ի վարկն այժմ ավելի ցածր է, քան երբեւէ:

ՀՀՇ-ի այս վարքագծի ընթրոնման բանալին թերեւս այն է, թե ինչպիսի նոր սահմանադրության են ձգտում այս կամ այն ուժերը: Ռուսաստանում ժողովրդավարները ձգտում են նախագահական իշխանության ամրապնդման: Հայաստանում նախագահն արդեն ունի բավական լայն լիազորություններ: Ընդդիմությունն ուզում է վերականգնել խորհրդարանային տիպի հանրապետությունը, սահմանափակել նախագահի լիազորությունները, ընդհուպ մինչեւ այդ դաշտոնի վերացումը: Հենց դրա դեմ է հանդես գալիս ՀՀՇ-ն, թեեւ դեկտեմբերյան իր դիմումի մեջ ՀՀՇ վարչությունը գանգատվել էր, թե ՀՀՇ-ն փաստորեն հեռացված է իրական իշխանությունից: Խորհրդարանի «Ազգային ժողովրդավարական միություն» ընդդիմադիր խմբակցությունն ըստ էության համաձայն է ՀՀՇ-ի այդ դնդմանը. հունվարի 29-ին խորհրդարանում այդ խմբակցության ներկայացուցիչը հայտարարեց. «Հայաստանում բոլոր կուսակցությունները ընդդիմադիր են»:

Ըստ էության հենց այստեղ է Հայաստանում ՍԺ-ի կողմնակիցների ու հակառակորդների ջրբաժանը: Եւ կրկին բացառություն է կազմում Հայրիկյանի ԱԻՄ-ը, որը հանդես է գալիս ՍԺ-ի եւ միաժամանակ նախագության դաշտանման օգտին: Օրենսդիր իշխանությունից համեմատաբար քիչ կախված ուժեղ գործադիր իշխանության դաշտանման հենց այս ձգտմամբ են համընկնում ՀՀՇ-ի եւ ռուս ժողովրդավարների նդատակները: Զուգադիպումը հազիվ թե դատահական լինի. քանզի երկուսն էլ գտնում են, որ նախկին խորհրդային հանրապետություններում տիրող խառնաւփոթության եւ դատակումների դայմաններում հենց նման իշխանությունը կկարողանա հետեւողականորեն անցկացնել բարեփոխումները: Ի դեդ, նրանց ընդդիմախոսները հակառակ տեսակետ ունեն:

Համեմատության համար առայժմ կա երկու օրինակ՝ համագումարի ձնշմանը հակառակ Գայդարի թեկնածությունը դաշտանելու եւ գինի անկարողությունը եւ սասանված Խասբուլատովի Հարությունյանի հանդեպ Տեր-Պետրոսյանի անհաղթ արձագանքը: Սակայն շատ դեռ ժամանակ է անցել, որդեսզի կարողանանք եզրակացնել, թե երկու երկրներից որ մնկում կհաղթի գործադիր իշխանությունը եւ վերջին հաշվով ժողովուրդը: ԵՏ

Դիտակ

Ղարաբաղի երեխաները հյուրընկալվել են Ուկրաինայում

ԼՂՀ Հանրապետության Գերագույն խորհրդի դեսական գիտաարարության իրավաբանական հարցերի եւ օրենսդրության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կարեն Բաբուրյանը հայտնեց, որ առաջին անգամ Ուկրաինայում, հանրապետության դաշտոնական նախաձարության Բոյարկա քաղաքում գտնվող դանսիոնատում (տնօրեն Պյոտր Պոլիշչուկ), է գտնվում դարաբաղցի 8-15 տարեկան երեխաների 50 հոգիանոց մի խումբ, որի խնամքը հանձն է առել Ուկրաինայի հասարակական համայնքը:

Այստեղ գեղարվեստական ինքնագործունեության մրցույթ է կազմակերպվել, որին մասնակցել են Ուկրաինայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի եւ ԼՂՀ-ի երեխաներ: Ղարաբաղի երեխաների խումբը գրավել է առաջին տեղը: Կազմակերպվել էր նաեւ հանդիպում տեղական քաղխորհրդի դաշտամավորների հետ:

Բացի այդ, ռեժիսոր Վիկտոր Խմելյովսկին 30 դողեանոց կինոնկար է նկարահանել Ղարաբաղի երեխաների մասին, որը հեռարձակվել է ուկրաինական հեռուստատեսությամբ: Կինոնկարի վերջում հայտարարվել է Ղարաբաղի երեխաների օգնության հիմնադրամի հաշվեհամարը: Ուկրաինա գնալու ճանապարհին խումբ երեք օր հյուրընկալվել է Կրասնոդար քաղաքում, որտեղ նրանց կնքել է տեղի քահանա հայր Հարությունյանը: Երեխաների աղոտիվմամբ զբաղվում էին տեղի հայկական համայնքի անդամներ Զավեն Քամալյանը, Վովա Ադաջանյանը:

Փետրվարի 14-15-ը լրանում է երեխաների Կիեւում գտնվելու ժամկետը, որից հետո խումբը հրավերով մեկնում է Օդեսա, որ նրանց նմանատիպ միջոցառումներ են սպասվում:

Ուղեւորության ընթացքում մեծ օժանդակություն ցույց տվեցին գործարարներ Ռ. Բասիկյանը եւ Վ. Միրզոյանը Կիեւից: Խմբի ղեկավարներն իրենց շնորհակալությունն են հայտնում Խաչիկ Սամբոյյանից եւ Վ. Հակոբյանից: ԵՏ

ԼՂՀ

Անդորրը հարաբերական է, լարվածությունը կայուն

Ինչպես հայտնի է, արդեն երկրորդ տարին է, ինչ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում իրադրությունը համեմատաբար հանգիստ է: Որքան էլ ցանկալի լինի նման հարաբերական անդորրը, այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ սովորաբար նման դադարներն ադրբեջանական բանակը օգտագործում է ուժերի վերադասավորման, հանձնման եւ նոր հարվածի նախապատրաստման նդատակով: Միաժամանակ ակնհայտ է նաեւ, որ ձյան հատ շերտն ու ցերտաստիճանի կտրուկ անկումը չեն կարող կասկածելի անդորրի միակ դատճառները հանդիսանալ, որովհետեւ փորձը ցույց է տալիս, որ ադրբեջանական կազմավորումները ձմեռային ամիսներին նույնդես երբեմն դիմում են զանգվածային ու տեւական հարձակումների:

Ինչպես երեկ հայտարարեց Հայաստանի դատանեկության նախարարության լրատվական ծառայության դեկավար Արմեն Դուլյանը, ամենայն հավանականությամբ ռազմաճակատների հարաբերական հանգիստը բավականին տեւական կլինի, որովհետեւ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանի սահմաններում ադրբեջանական բանակի վերջին մի քանի հարձակումներն ուժգին հակահարված են ստացել, եւ երեւի Ադրբեջանում հասկացել են, որ նմանօրինակ հարձակումներով անհնար է ինչ-որ բան հասնել: Ըստ որմ. Դուլյանի, կարելի է ենթադրել, որ ադրբեջանական բանակը նախադատրաստվում է գարնանը, երբ հնարավոր կլինի ավելի արդյունավետ օգտագործել մարտական տեխնիկան: «Ճիշտ է, ամենայն հավանականությամբ անդորրը կդահդանվի մինչեւ գարուն, բայց եւ այնդես ամեն ինչ հնարավոր է», ասաց նա:

Ինչ վերաբերում է հարաբերական հանգստին, արդա որն. Դուլյանի խոսքերով դեռ վաղ է խոսել վերջնական խաղաղության մասին, որովհետեւ որեւէ հիմք չկա ենթադրելու, թե Ադրբեջանը փոխել է քաղաքական հարցերը զենքի ուժով լուծելու իր սովորությունը: Պետք է ենթադրել, որ առաջիկայում եւս Ադրբեջանը կփորձի ուժի միջոցով լուծել դարաբաղյան հիմնահարցը:

Միաժամանակ ԼՂՀ ինքնադաշտանության ուժերի շտաբից տեղեկացնում են, թե ներկայումս Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ ստեղծվել է ուժերի առոսկի կայուն հարաբերակցություն, եւ ներկա ռազմաճակատի գիծն այդ հարաբերակցության արդյունքն է: Ըստ նույն աղբյուրների, ներկայումս միջոցառումներ են ձեռնարկվում Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային եւ հարավային մասույցներում նույնդես ռազմաճակատի գիծը կայունացնելու ուղղությամբ:

Վերջերս ամենատարբեր մակարդակներով խոսակցություններ են դատվում, թե Ռուսաստանը դատրաստվում է խաղաղարար ուժեր մտցնել Լեռնային Ղարաբաղ: Ինչպես տեղեկացանք որն. Դուլյանից, համենայն դեդս դատանության նախարարության լրատվական ծառայությունն այս մասին որեւէ տեղեկություն չունի: Այնդես որ, վերջնական կարգավորման մասին խոսելը դեռ վաղ է, եւ ԼՂՀ ինքնադաշտանության ուժերը դետք է հնարավորին չափ լավ դատրաստվեն ադրբեջանական բանակի գարնանային հնարավոր հարձակումներին:

ԱՐԱՍ ԱՐՈՒԹՅՈՒՆ

«Թաթարստանի ժողովրդի բանակի» դեմ քրեական գործ է հարուցվելու: Դատճառն այն է, որ վերջինս Թաթարստանի նախագահի հրամանագիրը խախտելով կազմավորել է ազգային գվարդիա: Այս մասին ՌԻԱ-ի բղթակցին հայտնել է Թաթարստանի փոխնախագահ Վասիլի Լիխաչովը: Նա ավելացրել է նաեւ, թե Ճարտնակվում է հանրապետության ռազմական դոկտրինայի նախագծի ուսումնասիրությունը, որի մասին իր կարծիքը կհայտնի ոչ միայն հանրապետության նախագահը, այլեւ դատգամավորները, Թաթարստանի Գերագույն խորհրդի նստաշրջանի ժամանակ: Նստաշրջանն իր աշխատանքները սկսելու է փետրվարի 8-ին: Սնարտ

Մայրաքաղաք

Բաղնիքը անուշ կամ ճակատագրի հեգնանքը

-Երբ եք վերջին անգամ լողացել՝ կնեռեք անհամեստ հարցի համար:

- Էհ, անցյալ երեքշաբթի գլուխս եմ լվացել: Իսկ որտե՞ղ լողանամ, ինչպե՞ս լողանամ:

Իսկապես, մեր կենցաղային դժվարությունները մեկով էլ են ավելացել. ինչպե՞ս լողանալ, երբ ջուր չկա, գազ չկա, հոսանք չկա: Գուցե հաճախեմ բաղնի՞ք...

Երեւանի 17 բաղնիքներից երկուսը բոլորովին չեն գործում, մյուսներն էլ գործում են, բայց ջուր չկա, այս չկա, այն չկա: Այն, որ դա կապված է գազի ու մազութի, հոսանքի ու ջրի բացակայության հետ, դեռ կարելի է ընդունել ու հասկանալ: Սակայն, դարձյալ է, կան բաղնիքներ, որ գործում են անգամ բոլոր չկաների դեպքում: Սակայն վերադահումներով կարելի է այդ բաղնիքները համարել գործող, քանի որ դրանք ավելի շատ մոտ են չգոյության սահմանին:

Շենգավիթի շրջանում այն «հին, բարի» ժամանակներում գործում էին երկու բաղնիք՝ թիվ 1-ը («Լազուր» միավորման հարեւանությամբ) եւ Չարբախի թիվ 6-ը: Գործում էին եւ իրենց դատերի ներսում աշխարհիկ աղտուկեղտից մաքրում օրական մոտ 1000 այցելուի: Իրենք՝ բնակիչներ, հասկանում թիվ 1 բաղնիքի ծառայություններից օգտվողներ երանությամբ էին հիշում այդ ժամանակները ոչ միայն լի ու բոլ լողանում էին, այլեւ օգտվում վարսավիրի, դերձակի, ոդիովերանորոգողի, տեսարանի ծառայություններից: Մաշչելի, կենսականորեն անհրաժեշտ մի հաստատություն բավարարում էր դրանից օգտվողների առօրյա դահանջները:

Սակայն ինչ-ինչ դատճառներով Շենգավիթի շրջխորհրդի դեկավարությունը մոտ երկու տարի առաջ որոշում է բաղնիքը վերցնել երբայխորհրդի կամուրջ ձեռնարկությունների եւ սդասարկման դորտի գլխավոր արտադրական վարչության տնօրինությունից: Հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցելու այդ արարողությունը սոդվում է բաղնիքը շենացնելու, սեփական շրջանի բնակչության սեփական ձեռքերով, իբր թե ավելի լավ լոդացնելու գաղափարներով: եւ քանի որ երբայդխորհրդի նախագահ Հ. Գալաչյանի եւ շրջանի դեկավարության, մասնավորապես Կ. Ռուբինյանի միջեւ ջերմ բարեկամական հարաբերություններ կային, արդա խնդիրը հանգում է բաղնիքը տնօրինող վարչության դեսին ուղղված հրահանգին եւ վերադասդրերի առաջ ու անարգել ձեւակերպմանը: Ամեն ինչ լավ էր եւ հաջողն էր գոհ, եւ հանձնողը: Հաջորդ քայլը, որ Շենգավիթի դեկավարները (նախագահ Ռուբինյան, տեղակալ Հովհաննիսյան) ձեռնարկում են բաղնիքը բաղի «ֆիդայիներին», շարժման առաջ անուրանալի վաստակ ունեցող մի քանի երիտասարդներին հանձնելն է լինում: Վերջիններս էլ բաղնիքը միջազգային չափանիշներին համադատասխանեցնելու, բնակչության սդասարկումն առաջնակարգ կազմակերդելու եւ շահույթ ստանալու վարդագույն երազներով ստանձնում են բաղնիքի բախտի հետագա տնօրինումը:

1992-ի ամառվանից բաղնիքն սկսում են բալանել, ավերել, քանդել, ջարդել, ոչնչացնել: Այժմ արդեն բաղնիքի տեղում անճանաչելի ավերակ է կանգնած. տարել են գույքը, լուսամուտները, դռները, ալյումինե կառուցվածքները, լոդանալու բոլոր հարմարությունները, անգամ տանիքը:

Մեր «քաջարի» մարտիկները հրաժարվել են բաղնիքը շենացնելու մտքից: Անմիջապես նույն մտքից հրաժարվել է նաեւ Շենգավիթի շրջխորհուրդը եւ դիմել քաղխորհրդի կոմունալ ձեռնարկությունների վարչությանը, խնդրելով կրկին ընդունել «մոլորյալ զավակին» եւ տխրություն անել: Այժմ, երբ շենքի տեսքից կատաստրոֆի գանկացած խիստ վճռականորեն տրամադրված գործարար, երբ շենքը կարգի բերելու ծախսերի հաշվարկները յոթից ութանիշ թվերի են հասնում, վարչությունը եւ շրջխորհուրդը խնդրում են որեւէ կազմակերդության վերցնել օբյեկտը եւ կարգի բերել: Ընդ որում այժմ արդեն համաձայն են այն տրամադրել անգամ ոչ որդես բաղնիք, այլ դարզապես շինությունը որեւէ կերդ օգտագործելուն, այն դեդքում, որ երեւանի համար 15 բաղնիքն էլ շատ քիչ է: Իսկ թիվ 1 բաղնիքի առավելությունն այն էր, որ օգտագործում էր ոչ թե գազ կամ ճնշդուր (օրական մոտ 1 տ. մազութ են օգտագործում բաղնիքները), այլ ջեկի փակ ցիկլի շնորհիվ էր աշխատում:

Շրջանի դեկավարության վերաբերմունքը թիվ 1 բաղնիքի նկատմամբ դարզելու մեր ջանքերը նվազ արդյունքներ տվեցին, քանի որ դեկավարությունը նոր է, իսկ բաղնիքային գործարքները նախկին դեկավարների օրոք են կատարվել: Շենգավիթի շրջգործկոմի նախագահի առեւտրի եւ սդասարկման գծով տեղակալ Արթուր Բաղդասարյանը հայտնեց, որ մի 10 օր առաջ նախագահի հետ շրջել են տարածքում (ինչո՞ւ 10 օր առաջ, երբ նախագահելու 6-դ ամիսն է բոլորում) եւ զրանցել բաղնիքի վիճակը, սակայն այժմ դրանով զբաղվելու համար ժամանակ չկա եւ օրվա խնդիրներն էլ բայլ չեն տալիս:

Այսինքն, դեռ երկար դիտի հատարակական տրանսդորտով երթեւեկելիս միքներս փակենք բաշկինակով, իսկ աչքերս էլ փակենք, երբ կատաղորեն գլուխը ոռոռդ երեխա տեսնենք: Ուրեմն չդիտի զարմանանք քոսի ու դիզենտերիայի, տիֆի ու սալմոնելոզի տարածման առագրությունից:

ԱՐՄԻՆԵ ՕՀԿՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մեկնաբան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՀԱՊԵՏԻՆ ՀՐԱԺԱՐԵՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Համաձայնութեան եւ միասնականութեան մասին

Յաստակդէս 1990-էն ասդին, բանիցս շեշտած ենք մամուլով, դեռական դաշտօնաւարներու հետ մեր ունեցած զրոյցներու ընթացքին թէ հրադարակային հանդիպումներու միջոցին, թէ մեր ժողովուրդին եւ մասնաւորապէս Հայաստանի փրկութեան, զարգացման ու բարգաւաճումի ճամբան կը հարթուի ազգային միասնականութեամբ։

Այս մէկ ու միակ ճշմարտութեան ամէնէն աւելի վերահաստատեալ դէմքէ է ըլլան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն ու իշխանութիւնը իրենց բռնին մէջ հանուած Հայոց Համազգային Շարժումի դարագլուխները։ Ամէնէն աւելի իրենք, որովհետեւ տիրանալով իշխանութեան՝ գլուխն, լաւ գիտեն, թէ ոչ մէկ հայ քաղաքական կուսակցութիւն, խմբաւորում եւ խմբակցութիւն ի միճակի չեն առանձին յաջող բերելու Հայաստանի ու Արցախի ազգերգական կացութեան։ Անցեալ երկու տարիներն անհերքելի ապացոյցն են ասոր։

Առանց աւելցնելու մը եւս վերլուծումը կատարելու մօտիկ անցեալին ու զայն ինքնին դիտակատարներուն վարագիծին, առանց դաստաստանաւորելու՝ կ'ուզենք դարձեալ ըսած ըլլալ, թէ Հայաստանի Հանրապետութեան վարչապետին հրաժարումը նոր առիթ մը դէմ է նկատուի Հայաստանի իշխանաւորներուն եւ մեր բոլոր ազգ ժողովուրդին կողմէ՝ համաձայնելու եւ միասնանալու։

Համաձայնելու շուրջ՝

- ազգային հիմնական նպատակներու։
- այդ նպատակներու նուաճման ընդհանուր ազգաւարութեան։
- բռնանութեան օղակներու յաղթութեանց յաջակցման։
- ազգային բանակի դարձեալ անկախ կազմութեան։
- սովիատահայ գաղութներու մէջ դարձեալ սերմանող եւ այդ գաղութները անխոհեմաբար քայքայել մտադիր դաշտօնաւարներ ու ներկայացուցիչներ անյապաղ տուն ելանելու եւ այլն։

Բայց ամէն բան առաջ համաձայնելու թէ մեր ժողովուրդի հիմնական գծերու լուծման բանալին, միակ բանալին, ազգային միասնականութիւնն ու համագործակցութիւնն է։ որուն դրսեւորումը այս պետական դիտի ըլլայ եւ որուն խոհրդանիշը դիտի կազմէ համաձայնական դահլիճը, զոր բաղկացնեն որակաւոր մասնագէտներ անկախաբար անոնց կուսակցական պատկանելութենէն ու հակումներէն, կը բաւէ որ անոնց հաւատարմութիւնը երբայ մեր ժողովուրդի շահերուն։

Այս համաձայնութեան եւ միասնականութեան իրագործման գլխաւոր դաշտասխանատուութիւնը կիյնայ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին ու Հայոց Համազգային Շարժումը ղեկավարող խմբակցութեան վրայ։

Ժամն է որ վերջինները բռնեն գիջողական քաղաքականութեան մը դռները ճամբան իսկ առաջինը նախընտրէ լայն ժողովրդական յենարանը փոխանակ կառչած մնալու խմբակցութեան մը երեսուն յենարանին, որ անկում անկում կ'առաջնորդէ Հայաստանի ներքին կայունութեան դահիճանման համար այնքան կենսական իր փարեն ու ժողովրդականութիւնը։

Քանի մը դարու աւարտին, Խորհրդային Միութեան փլուզումով, մարդկութիւնը երրորդ անգամ մը եւս իմքիմնք կը գտնէ աշխարհի նոր քարտիազրութեան մը. նոր բաժանումի մը իրականութեան դիմաց. այս անգամ սակայն առանց համաշխարհային դաստեղազմի։ Իրաք մը, Բոսնիա-Հերցեգովինա մը, Հայաստան-Արցախ մը այն տաք կէտերն են, ուրկէ կանցնին բաժանարար ախորժակները աշխարհի Մեծերուն։

Կուլ չերթալու համար այդ ախորժակներուն, մենք դէմ ունինք հայրենիքի եւ սիփոնի հնարաւորութիւններուն ամբողջութեամբ. մեր բովանդակ կարողականութեամբ դիմակալելու դահը։ «Մէկ հայրենիք, մէկ ժողովուրդ» կարգախօսը անբովանդակ տարազէ մը միս ու արիւն վերածելու դահն է այսօր։ եւ ասոր գլխաւոր դաստասխանատուներն են, կը կրկնենք, նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն ու ՀՀՇ-ի դարագլուխները։

Ոչ մէկ հայ դեռական գործիչ, ոչ մէկ հայ քաղաքական կազմակերպութիւն դէմ է ակնկալէ՝ որ իր շուրջ համաձայնութիւն ու միասնականութիւն կրնայ գոյանալ. որ ազգային վիճանալ սկսող զոհողութիւնները կը շարունակուին ընդարկաւ՝ ծառայելու խմբակցական շահերու յարատեւութեան. որ ժողովուրդին համբերութիւնն ու հայրենասիրութիւնը կը մնան անաղարտ. որ կանայակցութիւններ եւ յարաշահումներ կանցնին անդարձի ու անհետեւանք։

Համաձայնութիւն եւ միասնականութիւն կարելի են միայն սկզբունքներու շուրջ. ազգային նպատակներու շուրջ. հանազգային շահերու շուրջ։

Այսօր, նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն իրաւունքն դիմաց է համաձայնական դահլիճի մը կազմութեան դաստական որոշումը տալու. փաստելու թէ իմ զատակն ու հոգատարն է ամբողջ հայ ժողովուրդին, ոչ թէ շահադաշտանը այլաձեւ մեր ու ժողովրդային խարիսխէն կտրուած. ժողովուրդին ազնիւ տենչերուն հակադրուած խմբակցութեան մը. որ իր հետ երկիրն ալ կը տանի դէպի կիրճանում։

Դոկտ. ՎԱՀԷ ԴԱՇՏԵՆԱՆ

Պատրաստվում են արտակարգ նստաշրջանի Կառավարական նիստի ճգնաժամի դաստճառով Հայաստանի խորհրդարանի փետրվարի 2-ին ավարտված արտահերթ նստաշրջանում այդպես էլ չլուծվեցին օրակարգի խնդիրները։ Շընդունվեց Հայաստանի 1993 թ. բյուջեն, մերժվեցին Կառավարության առաջարկած ծրագրերը։ Նույն օրվա ուշ երեկոյան խորհրդարանն ընդունեց նոր դեկտմբերի նշանակումը, ժամանակավորապես ընդունվեց փետրվար-մարտ ամիսների բյուջեն։ ՀՀ նախագահ Ս. Արարքցյանի առաջարկությամբ փետրվարի 2-ից սկսած կառավարությունը խորհրդարանի արտակարգ նստաշրջան։

ՀՀ նախագահը թեկնածություն չի նշել Լեւոն Տեր-Պետրոսյանը մինչեւ ուրբաթվերջ խորհրդարանական խմբակցությունների եւ կուսակցությունների հետ հաղթական խորհրդակցություններ կանցկացնի Նախարարների Կաբինետի կազմավորման շուրջ, թեեւ առայժմ վարչապետի որոշակի թեկնածություն չկա. հայտնեց նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը։ Բայց արդեն այժմ կարելի է ենթադրել, որ առաջադրվածների մեջ իրենց տեղերը կգտնեն նախարարներ, բացի նրանցից, որոնց դաստասխանատու են համարում նիստերը կառավարության ֆինանսատնտեսական հաղթականության ծախողման համար։ **Մնաց**

Յուրայոյ Հարց

Մեռնելն էլ մի բան չէ...

Հուղարկավորության արարողութիւնների համար նախկին առասպելական գործարների ու որոնց հետ աճելիք խոսակցութիւնները նոր հեռուստ չեն մեր հասարակության մէջ։

Սակայն այսօրուայ ընտանեկան բյուջեն մեծապէս ազդեցութիւն է գործում ծեզ օգնել. մանաւանդ մինչեւ դարձեալ 3 հազարից 5 հազար, իսկ մեծաքաղաք գեղերում մոտ 10 հազար «թանկարժէք» սեռանալով։ Այսօր իր դերն է խաղում նաեւ հողի որակը. չոր դեղին (զրուցն) փոքրիկ ավելի թանկ արժէ։

Հէրեանի հետ կատարած հարցերս գեղջկաբնակներ հոսո մեծքաղ է գալիս գերեզմանատեղի կազմակերպումը։ Այսօր ուս նախ մեր հասարակությունից, թէ ինչ մակարդակով են մեր գերեզմանատեղիները, զուտարդ [illegible] 10-15 հազարի արանում։ [illegible] թաղումը դեռեւ [illegible] գերեզմանատեղը, որն իր ծառայությունները այս ծառայություններից, որոնք կատարում է հուղարկավորության դիրքում։

Դիր. Սդաչանեան նշեց, որ առանց որեւէ հոդվածների եւ ոգեկոչության հատուցիներ կարող են օգտել իրենց ծառայությունները կազմում է ավելի քան 20 հազար ռուբլի։ Ընդ որում, դրանից առաջի ընդհանուր 12-15 հազարը ծախսվում է դագաղի վրա, դիակատ ակնոնների ծախսը կազմում է նեղկոյուտ 4900 ռ., փոքր փոքրը մոտ 640-840 ռ. (նայած հողի որակին), տրաժշական սոսասարանը 400-500 ռ։ Մնացեալ նիշերն ալ ծառայությունները, ոչ մեծ նիշերն ալ ծառայությունները, ոչ մեծ նիշերն ալ ծառայությունները։

Գիր. Դագարյանը նշեց, որ դեռեւս նախորդ ժամանակներից գոյություն ունեցող որոշակի հանգամանք, ոչ ստրկությամբ (ուրեմն եւ վարչության) ուսվիր կատարվում են միայն տիրագրել հանրությունների [illegible] գերեզմանատեղերի աշխատանքներից։ Ինչպես [illegible] գերեզմանատեղերի աշխատանքներից։ Ինչպես [illegible] ազատվել են փոքր փոքրը դիակաց դուռ ուզելու համար։

Ինչպես տեսան, ոչ մեծաքաղաքներում իրոք շատ «հարմարաբեռ» հնարավորություններ են ընձեռնվում թաղումներ կատարելու համար։ Սակայն սակայն, որ Աղաջանյանի եւ Դագարյանի հետ ունեցած զրույցներից հետո նույնիսկ նախանձ ճեղքիմ այսօրվա «հանգուցյալներին», որ կարող են ոչ ոչ ոչ

Հեղինակային

ԱՐՋԻ ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Պատմում են, թե օրերից մի օր գեներալ դր Գոլը կանչել է իր մամուլի ծառայության ղեկավարությանը եւ դժգոհություն հայտնել, թե ֆրանսիական թերթերն ինչո՞ւ են ներկայացրել նախկին ուժգնությամբ ննջադասել իրեն հանրապետության նախագահին: Այս դեպքության բացարձակ հավասարությունը դժվար է հաստատել, սակայն կարող ենք ասել, որ վերջին տասը տարիների ընթացքում որքան ասիր ենք ունեցել կարդալու քաղաքական տարբեր հոսանքներ ու կուսակցություններ ներկայացնող ֆրանսիական մամուլը, ապա հանդիպել ենք Միտերանին հասցեագրված բազմաթիվ քննադատական նյութերի, ապանիչ ծաղրանկարների, սակայն դժվարանում ենք հիշել թեկուզ մի դեպք, երբ ինքն իրեն մամուլական հորջորջող որեւէ տիկին իր ցերեկոնոցը ղեկտրության տակ առներ հանրապետության նախագահին:

Ուստի երբ կարդացինք Գրիգելդա Նավասարդյանի «Դեռ գարուններ եւ շոգ ամառներ են լինելու» հոդվածը, ակամայից մի տեսակ տխրություն զգացինք Հայաստանի Հանրապետության նախագահի համար: Մի՞թե նա կարիք ունի այսպիսի ղեկտրության: Հանրապետության նախագահի ծառայությունները իր ժողովրդին չափվում եւ կշռվում են ոչ այնքան անհատների սուբյեկտիվ գնահատականներով, որքան իրենց համաղասախանությամբ տվյալ ղեսության սահմանադրությանը եւ գործող օրենքներին, ազգային իդեալների ներ ունեցած կոնստրուկտիվ համերաշխությամբ եւ վերջապես այս ամենից բխող աշխատանքով եւ շոշափելի արդյունքներով: Իսկ երբ հունվարի 22-ին, հոդվածը լույս տեսնելու հաջորդ օրը, կարդացինք «Ազգ»-ի խմբագրական ուղղումը, ապա վերոհիշյալ համոզվեցինք, որ ճախավեր բռնած գործն առնվազն ճախավեր հետեւանքներ է ունենում, եթե ոչ վատբար: Խմբագրական ուղղումն ասում էր, թե «Դեռաբեն չի ձեր ասում ձեզ, որ մարգարեն չի ձեր քաղաքում» բնաբանը ոչեմ է լինի «ուշարեւ» եւ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում»:

Առաջինը՝ սիրալ բնաբանը «...մարգարեն չէ ձեր քաղաքում», կարդացել էինք որոնց մեզ հասցեագրված անընդհատ զգուշացում: Մինչդեռ ճշգրիտ բնաբանն ուղղակիորեն ակնարկում է նախագահին եւ, մեր կարծիքով, շատ փափուկ կարգադրություն մեջ դնում նրան: Դասական բանաստեղծությունը այս բնաբանի շատ որոշակի բնութագրումներ ունի, սակայն մեր օրերի ենթատեքստում ինչպես նաեւ «սարգարեն ընդունելի չէ իր քաղաքում» նախադասությունը: Այնպես որ մենք ժողովուրդս, արժանի չենք մեր նախագահին եւ որ հետո, տասնամյակներ ու հարյուրամյակներ անց, ոմանք գնահատվի՞ նրա գործը, թե՞, քանի որ «մարգարեն» բնդունելի չէ իր հերում, ապա դիտի գտնի իրան դաստաբ մեկ այլ երկրի հ հասարակության: Հազա՞ր մեղ ներում: սակայն բնաբանը իրավունք է տալիս նաեւ այսպես ընթերցելու, ճանապարհ, որ մեր մամուլի նախագահի դերը թերագնահատեմ դաստաբանեմ, ամենքս ասենք հրադարակեցինք մի լուր, թե Լատինական Ամերիկայի հայության 98 տոկոսը քվեարկել է ...մեր նախագահի...

Կարելի է խնդրո առարկա հոդվածից շատ նման որոշ օրինակներ, երբ ցանկանալով դաստաբանության տակ սոսնձել նախագահին, հոդվածագիրն ակամա ավելի վատ լույսի ներքո է ներկայացնում իր դաստաբանյալին: Եվ դաստաբանը այն չէ, թե Գ. Նավասարդյանն անիծած է գրչի անդարեգում: այլ որ անիմաստ է մամուլի էջերում «հարձակումներից» հանրապետության նախագահ դաստաբանելու երեւույթը: Բոլոր ժողովրդավար երկրներում «հարձակումները» (ընդդիմությունը) նախագահներին սնուցող ուժեր են: Այնպես որ մեր «սեփականությունը» հագիվ թե ավելի վնասակար լինի նախագահի համար, քան Գ. Նավասարդյանի ճախավեր դաստաբանությունը: Սակայն սա չի նշանակում, թե Գ. Նավասարդյանի «նման մտավորականները» ձեռնդահ դիտի մնան իրենց համակրանքը ներկա իշխանությունների հանդեպ գործով ու խոսքով արդացուցելուց: Միջոցները շատ են ու բազմազան: Օրինակ, ժամանակին, մի Շարլ փափկասուն տիկնայք հայոց զինվորագրվեցին ծեծող կանանց «մայրան գնդին» եւ ոսկի էջեր ավելացրին մեր ժողովրդի դաստության տարեգրության մեջ:

Նախագահական տեսքերն ամենասուրբաշատ նյութերն են բանավեճերի համար, ուստի մեր նախկին հոդվածին ավելացնելու բան չունենք: Սակայն Գ. Նավասարդյանն իր դաստաբանական մղումների հետ մեջտեղ է հանել որոշակի խավերին «հատուկ մտայնության մի քանի ուրագրավ փաստեր որոնց շուրջ անհրաժեշտ է խոսել՝ նախագահի ամենուրյա հույսից անկախ ը դուրս:

Մեր հոդվածի խնդիրը, որ վերջին ժամանակներս տարբեր փարթերավորումներով ամենի ու ամենի հանգիստ մատուցվում մեզ «...բնդսան էին այն միայներ, որոնք բոլոր տեսակի, բազմիցս այդ ժամանակաշրջանը մեր շարժման ամենանիգ շրջանն էր»:

Ռոմանտիզմն ընդունելի է արվեստ եւ գրականության մեջ, այն էլ զանգվածի որոշակի ժամանակաշրջանում, սակայն երբ վերհիշյալը դառնում է խոսելիքիմության, արկածախնդրության եւ քաղաքական այլ ծայրահեղ դրսեւորումների շարք, ապա կարելի է խոսել քաղաքական ենգադիսության մասին: Իսկ «Օ՜հ, փշոս է ճանապարհդ...» բառերի հնչյունական խնդրանքը ռոմանտիկ բանաստեղծը քաղաքականության հարցերում չափազանց հեռատես նույնիսկ նրա բանաստեղծությունները դրսեւորում: Ռոմանտիզմը քաղաքականության մեջ ընդունելի է միայն որպես ամենակարճ կրառման ապրանք: Հիրավի, ռանգանքը ժողովրդի հաստիկ քաղաքական ռոմանտիզմ երբ է, իսկ ինչպես ասենք ինքնիշխանությունը հասած ազգի համար... սոիտան Ինքնիշխանությունը... Հաստատում առաջնը այս տարեհանն է գործում:

Հեղափոխական ռոմանտիզմի շրջանը է հագնում նաեւ մեր ազգությունը ...ինքնագիտակցությունն ...վերջ ...ամենը, առաջ գտնելի էր հանդես ...ներ տարեկան ...ամենով հեղափոխի հանարել սրա զրությունը, բայց հանի որ այդ հանգիստ ...«սոցիալիստական ...մի» այլագոյությունը է այսօր, ապա ձգտում է իր բացարձակ իշխանությունը հասցնել մտքերի եւ հոգիների վրա: Օրուելի վեղում Խաղաղության նախարարությունը զբաղված էր ղաստերազմի հոգսերով, իսկ Սիրո նախարարությունը ղաստերից ներս կոստանքների էին ենթարկվում մարդիկ: Երբ սարկությունն ավելի դաժան կերդարանք է ընդունում, ապա այն կոչում են ազատության անունով: Երբ մեկ հոգու գերիք էիր, իսկ հիմա տասը տարով դառան ես դարձել, նշանակում է ազատվել ես:

Իսկապես եւ շոշափելի ինչ նա այսօր հետախակի գործածվող «անկախություն» եւ «ազատություն» բառերի հետ: Երբ ոչ նորոյա ճիրաքանչյուրն: Ընդունենք վերջապես, որ **անկախությունը մեզ ղարտադրվեց**, իսկ ազատ դարձանք այնման, որքան էիք: Երբ նայիր նում մեր հանրապետությունն Ուկրաինայի, Ղազախստանի, Լիտվայի եւ այլ մեծ ու փոքր հանրապետությունների հետ ղաղանիշների կրելման մեջ էր միայն Մոսկվայից, ապա այսօր դարձանք Վաշինգտոնի, Մոսկվայի, Անկարայի, իսկ երբեմն էլ Այրթեքանի, Վրաստանի, Նախիջեւանի, Հարավային եւ Հյուսիսային Օսիաների, Աբխազիայի, Մատենուլի եւ Ղանգելանի շրջանների վասալը, չասած արդեն քաղաքական վարագույրներից անդին գտնվող զանազան ուժերի մասին: որոնք հայտնի չէ, թե վաղն ինչպիսի ուժգնությամբ եւ հոգուս ում կեսանեն մեր ոսոյնեներից կազմված թեղեր:

Մեր անկախությունը չնվաճվեց այնքան, ինչպես նրա հետեւանքով ստացված ազատությունը: Մեր ազատությունն ստիպեցինք մի մեծ ու մութ խաղի փոքր միավորներից մեկն էր: որ սեակվեց ու ծագրվեց, ամենայն հավանականությամբ Հայաստանից եւ ԽՍՀՄ-ից դուրս: եւ քանի որ անկախություն կոչված մեր ճաշը եփեցին ուրիշներ, ապա դպահանջվեց, որ դրան համապատասխան բենադրություն ծավալվի: Ոչինչ, եթե հիշյալ ներկայացումից հետո դերակատարները ոդջ-առողջ տուն վերադառնային: Սակայն զոհեր եղան իսկական եւ շատ: Մեր անկախությունը մեր ազգային իդեալներով ու մեր ստեղծած հաշիվներով չկերտվեց: Անկախությունն եւ ազատությունը մեր մոմժոդ բաներ չեն:

Վերջապես եթե մեր թիկունքից մեր անկախությունը որոշվել էր եւ մենք այնես ուրիշ ճանապարհ չունեինք, ապա առավել զգույշ դիտի լինենք եւ հասկանայինք, որ դիվական վիճակախաղով միանգամից անկախացող ազատությունը նայս եւ առաջ դիտի չ ենթադրվեր եւ արտադրություն: Ցինչդեռ հիմիից կոչանվիցիք թե մենք, թե մյուսը եւ ընդհանրապես ծաղրուծանակի ենթարկվեցինք որոնք, ովքեր հոտառություն ունեն էին զարգացնել առաջադրել այս տարեկան ճանապարհները:

«Դեռ սենք չի նասնակցել, արդյոք, այդ «հրեաների» փակված բաղաքաղաքական սիստեմին...» հարցում է Գ. Նավասարդյանը նկատի ունենալով առաջ կայանը ու «Նախիջեւանը»:

Դեռեւ, այդ միջոցները կազմակերպվում էին որոշակի ուժերի կողմից: Ակնհայտ այդ նույն օրերին բազմաթիվ լուրջ եւ հասկացող մարդիկ բացատրում էին, թե որքանով է շահավետ եւ որքանով վտանգավոր դրանց փակելն ու չփակելը: եւ վերջապես եթե այդ ցույցերն իրոք ինքնաբուխ էին, ապա այդ օրերի ընդդիմադիր ուժերը որտեղ էին կանխատեսել այսօրը: Եթե չէին տեսնում: նշանակում է իրավունք չունեին: իսկ հիմա առավել ավելով չունեն: քաղաքական զարգացումներ զարգրվելու, եթե տեսնում էին, բայց շարունակում էին նշանակում է...

Գ. Նավասարդյանն իր հոդվածում շեշտված հանգամանքներ եւ հանգանակներ կնկատվում է ընդունել, սակայն, ոչինչ էլ անհայտ տալի է, չի խոստանում իր հանդեպ այդքան ասելի հերետիքների: Հարցը ոչ այն չէ, որ նոր տարգիայով հիշում է, թե «ստաջնորդում ո՞վ կհամարձակվեր ֆնեաղոտել կենտրոնի քարտուղարին»: Կամ էական, կոնցեպցիոն ընդհանրացումներ, ինչպես ասենք անհամատեղելի գաղափարի եւ իրականության արհեստական, բռնի մերձեցումը: Այս երեւույթը դիտելի է նկատել դեռեւս Երվանդ Օշականի «Փանջուրի»-ում, երբ սոցիալիզմն առաջին քայլերն էր անում Արեւելյան Հայաստանում: արկածախնդիր «հեղափոխականը» ձգտում է կյանքը հարմարեցնել իր գաղափարին: Սրա առավել դասական տեսակն էր ջիգեվ...ը, երբ Կարսյան գաղտնի ճանապարհներով ...ական իրաձիգներ ...հանում լատինամերիկյան ...Հիմա էլ Հայաստանում ... եւ անկախություն ... կում լոգկոց ու հացի ... մոց ե նավթագազից, մթ... գրից, առնեսներից ... ած ...ներից, կեղտից ու ... ջրից, դիզենտերիաներ ... նախտներից, հարանա... ...ից ու «սոլիկավոր... ...ված ժողովրդին, ապա... ...սարում իշխանություններ... ու մեղավոր հայացքի ներ... կացնահարող ու տոցոր... ...դիների ու թոռների առաջ... ...յսօր վառարաններում այրող ... ...դին եւ հայտարարում, թե հան... այդ գաղափարների, ժողովուրդ... ...ցնի լուս հանդուրժի, ամեն մի ... ու նվաստացում եւ տոպան... ...հավիրների: Բոլոր տոտալիտ... ...տությունները գաղափարը ... ...սում են մարդուս ... վատ... ...ալն էլ, կրկնելով ... ...ում ու մենք անողջության ոգիի բանկ վճարեմք ուրիշի ձեռքով մեր ...ղին ...արաված այս «հեղափոխության իրականության» համար. «...սա մեր ժողովրդի դարերից եկած, տառապանքների միջոցով հասցված մտածելակերպն է. ուրիշ կերպը ուրիշինն է, ոչ իրենը»:

Հարգելի տիկին, այդ որտե՞ղ է գրված, թե մեր ժողովուրդը շառանակ ոգիի տառապի. կեղտի ու կարիքի մեջ ապրի. օրվա հացը հոգա... Մի՞թե հավերժական բզվաությունն է մեր ազգային դիմագիծը. ի՞նչ է. բարեկեցիկ կյանքը միայն ուրիշ ժողովուրդների՞ն է վերապահված: Արդյոք որքա՞զ է մեր հունական դեսակությունը դարամական խորհրդում ծնված ու հելլադայում հոկված ժողովրդավարությունը, որն ուզում ենք այսօր ներմուծել քառորդ դարի հնգաբալով ապրող մեր հանրապետություն, որ քանի՞զ է մեր կաղապարի նշանակությունն այն գիտակցում ու գաղափարային դերը, որն այսօր, Հայաստանում, ասեն ամենքիս ոտում է մեր դեմքին:

Ոչ ոք չի կասկածում, թե «դեռ գարուններ եւ շոգ ամառներ են լինելու»: Ուզենք թե չուզենք լինելու են. բարեբախտաբար, դա կախված են ոչ մեր դեկավարությունից, ոչ Այրթեքանից, ոչ էլ «երրորդ ուժից»: Սակայն մոտալուտ գարունները ու ամառները դիտի բացեն ապի մեջ թաղված, ծառահատված ու խորտակված ամերիկեան ...ության ապոկալիպսյան դաժան շրջակերները, իսկ գարնան ավետումն էլ շատ հնարավոր է լինենք ու չտեսնենք, քանզի բոլոր հոգսերը կնն, որ ծաղկելու ծառ չ... ...իսկ իրենց բներ վերադարձ... ...ները դեռ սոսոր չեն բանարարկերում: տեղադրված բիթեղյա գաղափարների ծիսնդալքներին բանել: Առաջիկա մի քանի ամսում ...արանձավային կենցաղին վերջ... ...ականաորեն ընտելացած մեր ժողովուրդը, ներողություն, ցնցախտում... Զանգիբարից ներմուծված տարամների բավ հնչյունների տակ ներարկի նոր գեղագիտի սնուցում հարցը: Այդժամ, տիկնի, դուք ո՞ւ կլինեք, չվա՞ծ կլինեք, ինչպես արտաքին սենսասիոնալ գաղտերի ոչ կուրիֆեյը, մեր իսկան, որը «...սատանը աշխարհի հետ միլիոնանոց, ներողություն, միլիոնավոր թեներով կարելուց հետո ...ոգնած ...թեզարած գնաց դարը ...ության մեջ հազա անդարձ ինտեր... ...տեսնե՞ք արդյոք, տիկնի, այդ ...ության նախարարի հերոսական ...ակին, թե կմնա ...ի եւ ...ական բանաստեղծներից մեկում կդեկավարեք նոր գեղագիտի նախընտրական արշավը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՓՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Աշխարհ

ՃԱՊՈՆԻԱՆ ՎԵՐԱԳՐԱՎՈՒՄ Է ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱՆ

«Վերագրավում»: Այս տերմինի մեջ, որը հաճախ է օգտագործվում Հարավ-Արեւելյան Ասիայի երկրների մասուլը, կապված երջանում Ճապոնիայի ազդեցության աճի եւ գերտերությունը հասուկ դիրքերի հաստատման հետ, դարը հիշողությունների եւ մեծ մտավախությունների երանգ կա: Երբ Եվրոպայում «սառը պատերազմի» ավարտական փուլում սոցիալիստական համակարգի պարտության բիվ մեկ արդյունք երկու Գերմանիաների վերաբերվումը, տեղի ունեցավ Արեւմտյան Գերմանիայի հետ խառնամիս սերտ դաշնակցության ավանդույթներ ունեցող, բայց երկրորդ աշխարհամարտի սարսափները չմոռացած Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի անհանգիստ տրամադրությունների ներքո, ապա ի՞նչ սպասել Հարավ-Արեւելյան Ասիայի երկրներից, որոնք դեռ պարտ տիպ կարողացել հաղթահարել անլիարժեքության բարդույթը նախկին ոստիկան, իսկ ներկայումս տնտեսական ագրեսորի՝ Ճապոնիայի նկատմամբ: Այդ եվրոպացիներին հարկավոր է երկրորդ աշխարհամարտի գլխավոր բաներաբերը հին աշխարհը եւ նրան հարող տարածքները, իսկ դարիս մեծագույն ռեւանշիզմը ֆաշիզմը: Ասիայի ժողովուրդների կրած տառապանքները ճապոնական մեծամտության հաստատման անհաջող, բայց խիստ արյունալի փորձի հետեւանքով ոչնչով չեն զիջում Եվրոպան խոցած արհավիրքներին: Ուստի Ճապոնիայի կողմից Հարավ-Արեւելյան Ասիայի վերագրավումը, թեկուզ եւ սոսկ բարոյակիրք ու ինչ-որ տեղ գայթակղիչ՝ տնտեսական միջոցներով, արդարացի անհանգստություն է առաջացնում երջանի երկրներում:

Սակայն չի կարելի ասել, որ լայնածավալ ներթափանցումը հարեւան երկրների տնտեսական բնագավառը, ինչը այս կամ այն կերպ ի վերջո վերաճում է նաեւ բարոյական ազդեցության, միայն բաղադրիչ առաջացնելու

Լուրերի Հոսք

Ռուսական 5 ուղղաթիռներ թռել են շրջափակված Տղվարչել

Չորեքշաբթի առավոտյան մարդասիրական նպատակներով բեռնված 5 ռուսական ուղղաթիռներ թռել են վրացական զորքերի կողմից շրջափակված Տղվարչել: Երկու ուղղաթիռ թռել են Սուխումից, իսկ երեքը Գուդաուտայից, «ԻՖ»-ին հայտնել են արտակարգ իրադրությունների Ռուսաստանի պետկոմի Սոչիի օդերևութաբանական ծառայությունում: Նախատեսվում է նրանց վայրէջք Սուխումում, վրացական իշխանությունների կողմից սուգ ման համար: Ինչպես հայտնել են օդերևութաբանները, թռիչքներին նախորդել են երկարատև բանակցություններ Ռուսաստանի, Աբխազիայի և Վրաստանի ներկայացուցիչների միջև ՄԱԿ-ի ներկայացուցիչների անմիջական ներկայությամբ: Սրանց արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Տղվարչելից հիվանդներին և վիրավորներին էվակուացնելու և այնտեղ մարդասիրական բեռներ հասցնելու վերաբերյալ:

Ընտրում են Մոլդովայի ԳԽ նախագահ

Չորեքշաբթի օրը Մոլդովայի խորհրդարանականները ընտրում են ԳԽ նոր նախագահ: Ինչպես «ԻՖ»-ին հայտնի դարձավ լավատեղյակ աղբյուրներից, առավել հավանական թեկնածուն ԳԽ ներկայիս փոխնախագահ Վիկտոր Պուլկանուն է: 49 ամյա Պուլկանուն դրոֆեսիոնալ իրավաբան է, ավարտել է Մոսկվայի համալսարանը: Նա հայտնի է որպես ինքնիշխան Մոլդովայի գաղափարի հետևողական կողմնակից: Միաժամանակ հանդես է գալիս հարեւան Ուկրաինայի եւ Ռումինիայի դեմ կառերի գերակայության օգտին, կողմնակից է Ռուսաստանի հետ մշտական կառերին: Վ. Պուլկանուն դեմ է ԱՊՀ շրջանակներում հաղթական դաշինքին:

129 մլն. մարկ ռուս սպաների վերուսուցմանը

Գերմանիայի նպատակաուղղումը 129 մլն մարկ է հատկացրել Գերմանիայից դուրս բերվող զորախմբի ռուս սպաների վերադասավորման համար Ռուսաստանում 10 կենտրոն բացելու նպատակով: Այդ մասին լրագրողներին նովոսիբիրսկում հայտարարեց գերմանական KFW բանկի ներկայացուցիչ Պիտեր Թոլկեր Դրաեզը: Նրա խոսքերով, 8,5 մլն մարկ նվիրաբերվի Նովոսիբիրսկում կենտրոններից մեկի բացմանը: Կենտրոնները սպաներին հնարավորություն կտան անվճար ստանալ մենեջմենտի եւ մարկետինգի մասնագետների կրթություն: Մեկամսյա ուսումից հետո երգանավարները կստանան միջազգային վկայագիր, որը համարժեք կլինի Արեւմուտքի առաջատար համալսարանների վկայագրերին:

Իրան-Ուկրաինա գազամուղ

Ուկրաինայի Նախարարների կաբինետը «Ուկրգազ» պետական ընկերությանը 1,8 մլն. դոլար է հատկացրել իրանական-ուկրաինական համատեղ ընկերության կանոնադրական կապիտալի ուկրաինական մասի գոյացման համար: Այդ ընկերությունը պետք է նախագծի եւ կառուցի Իրան-Ուկրաինա գազամուղը, երեքշաբթի հաղորդել է Ուկրաինայի ռադիոն: Համատեղ ձեռնարկության ստեղծման ուղղությամբ համաձայնություն էր ձեռք բերվել անցյալ տարի: Գազամուղը կանցնի Իրանի, Արդրբեջանի եւ Ռուսաստանի տարածքով:

ՄԱԳԱՏԷ-ի փորձագետներն ստուգում են Զապորոժիեի ԱԷԿ-ը

Երեքշաբթի օրը Զապորոժիե ժամանած ՄԱԳԱՏԷ-ի փորձագետները կուսումնասիրեն Զապորոժիեի ԱԷԿ-ը միջազգային այդ կազմակերպության երաշխիքին հանձնելու հնարավորությունները: Ներկայումս նման ստուգումներ ՄԱԳԱՏԷ-ի փորձագետներն անցկացնում են Ուկրաինայի բոլոր ԱԷԿ-ներում: Դրանցից մեկը՝ Ռովնոյինը արդեն հանձնված է մեկ գործակալության երաշխիքին:

Մարզական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԿՍՎԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ

Հայաստանի մրցավարները ՖԻՖԱ-ի համագգեստով

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի հովանու տակ նոր մրցաշրջանում անցկացվելիք խաղերը կդատարկեն նաեւ Հայաստանի մրցավարները: Այդ մասին Ցյուրիխում գտնվող շաբաթաթերթից հաղորդեց ՖԻՖԱ-ի գլխավոր քարտուղար Յոզեֆ Բլաստերը: Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիային հասցեագրված դրությունում նշվում է, որ Հայաստանի ֆուտբոլային 8 մրցավարներ կմասնակցեն միազգային խաղերի անցկացմանը:

Նրանցից երեքը՝ 35-ամյա Սլավա Ղազարյանը եւ 29-ամյա Կարեն Նալբանդյանը (բոլորն էլ Երեւանից), հանդես կգան գլխավոր մրցավարի դերում, իսկ Ռոբեն Ղազարյանը, Ավետիս Հովսեփյանը, Սողոմոն Զանազանյանը, Հակոբ Ներսեսյանը (Երեւան) եւ վանաձորցի Անդրանիկ Բոնջուկյանը կլինեն որպես օգնականներ:

Միջազգային խաղերը եւ ՀՀ ազգային առաջնության ու գավաթի հանդիպումները նրանք կանցկացնեն ՖԻՖԱ-ի խորհրդանշանով:

Շվեյցարիայից ստացված ուղերով տեղեկությունից հետո հանդիպեցինք ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահության անդամ, մրցումների կազմակերպման եւ անցկացման կոմիտեի նախագահ, մրցավարների նշանակման հանձնաժողովի նախագահ Սլավա Ղազարյանին, որը ՖԻՖԱ-ի այն 3 ընտրյալներից մեկն է, որը որպես գլխավոր մրցավար պետք է միջազգային խաղեր վարի:

– Ի՞նչ սկզբունքներով ՖԻՖԱ-ն ընտրեց մեր մրցավարներին:

– ՖԻՖԱ-ի խնդրանքով մենք ուղարկել ենք 12 մրցավարների բոլոր տվյալները: Դեկտեմբերի 17-ին Ցյուրիխում տեղի ունեցած ՖԻՖԱ-ի հերթական նիստում ընտրվել են հիշյալ 8 մրցավարները:

– Ե՞րբ է սկսվելու ՀՀ ֆուտբոլային նոր մրցաշրջանը:

– Այն մարտի 14-ին կսկսվի գավաթային խաղերով: Նախատեսվում է 32 թիմի մասնակցություն: 1/16-ը հարեւանությամբ տարբեր մարզադաշտերում տեղի ունեցած հանդիպումներ: Մարտի մեկնարկը դարձնելու ժամանակ [illegible] հարմարվեց, որ Հորանդիայի հավաքականի հանդիպումը կկայանա մայիսի 25-ին: Մենք ուզում էինք ավանդույթ դարձնել եւ եզրափակիչ հանդիպումները միշտ անցկացնել մեր անկախ պետականության օրը՝ մայիսի 28-ին, սակայն այս անգամ դա հնարավոր չի լինի, քանի որ Հայաստանի ազգային հավաքականը մայիսի 26-ին մրցաշրջանի է մեկնելու ԱՄՆ:

Ասեմ նաեւ, որ եվրոդայի գավաթակիրներն՝ գավաթի հերթական խաղարկությանը մասնակցելու է ոչ թե անցյալ տարվա գավաթակիր Աբովյանի «Բանանց»-ը, այլ այս տարվա գավաթակիրը:

Ինչ վերաբերում է առաջնությանը, բարձրագույն խմբի մրցաշարը սկսվելու է ապրիլի 11-ին: Այս անգամ չեմպիոնի կոչումը վիճարկելու են 16 թիմ «Շիրակ»-ը, ՀՄԸՄ-ն, «Բանանց»-ը, «Վան»-ը, «Արարատ»-ը, «Այունիֆ»-ը, «Կոտայք»-ը, «Նաիրի»-ն, ՀՄՄ-ՖԻՄՄ-ն, «Զվարթնոց»-ը, «Կանազ»-ը, «Կիլիկիա»-ն, «Քասախ»-ը, «Շենգավիթ»-ը, «Իմոդալս»-ը եւ 1-ին խմբում հաջողության հասած Արարատ քաղաքի «Ցեմենտագործ»-ը: Երեք որեւէ թիմ ինչ-ինչ պատճառներով հրաժարվի առաջնությունից, ապա նոր հանդիպում չի լինի: Բարձրագույն խմբում վերջին 2 տեղ գրավողները իրենց տեղը զիջելու են 1-ին խմբի 2 լավագույն ակումբներին: Այսպես հանդես է գալու 17 թիմ: 2-րդ խումբը կկազմի 12 թիմ:

Օգտվելով առիթից, ուզում եմ դիմել բոլոր թիմերի ղեկավարներին, որ հայտերի վերջին ժամկետը մարտի 1-ն է (ներառյալ): Մինչ այդ մուտքի վճարումները պետք է մուծված լինեն մեր անկախ պետականության օրը՝ մայիսի 28-ին, սակայն այս անգամ դա հնարավոր չի լինի, քանի որ Հայաստանի ազգային հավաքականը մայիսի 26-ին մրցաշրջանի է մեկնելու ԱՄՆ:

Ասեմ նաեւ, որ եվրոդայի գավաթակիրներն՝ գավաթի հերթական խաղարկությանը մասնակցելու է ոչ թե անցյալ տարվա գավաթակիր Աբովյանի «Բանանց»-ը, այլ այս տարվա գավաթակիրը:

Ինչ վերաբերում է առաջնությանը, բարձրագույն խմբի մրցաշարը սկսվելու է ապրիլի 11-ին: Այս անգամ չեմպիոնի կոչումը վիճարկելու են 16 թիմ «Շիրակ»-ը, ՀՄԸՄ-ն, «Բանանց»-ը, «Վան»-ը, «Արարատ»-ը, «Այունիֆ»-ը, «Կոտայք»-ը, «Նաիրի»-ն, ՀՄՄ-ՖԻՄՄ-ն, «Զվարթնոց»-ը, «Կանազ»-ը, «Կիլիկիա»-ն, «Քասախ»-ը, «Շենգավիթ»-ը, «Իմոդալս»-ը եւ 1-ին խմբում հաջողության հասած Արարատ քաղաքի «Ցեմենտագործ»-ը: Երեք որեւէ թիմ ինչ-ինչ պատճառներով հրաժարվի առաջնությունից, ապա նոր հանդիպում չի լինի: Բարձրագույն խմբում վերջին 2 տեղ գրավողները իրենց տեղը զիջելու են 1-ին խմբի 2 լավագույն ակումբներին: Այսպես հանդես է գալու 17 թիմ: 2-րդ խումբը կկազմի 12 թիմ:

Օգտվելով առիթից, ուզում եմ դիմել բոլոր թիմերի ղեկավարներին, որ հայտերի վերջին ժամկետը մարտի 1-ն է (ներառյալ): Մինչ այդ մուտքի վճարումները պետք է մուծված լինեն այդ վճարները:

– Բարձրագույն խմբի թիմերի համար՝ 250 հազար, 1-ին խմբում՝ 150 հազար, 2-րդ խմբում՝ 100 հազար ռուբլի:

– Ինչպիսի՞ն կլինի մրցավարների վիճակը:

– Նախատեսում ենք յուրաքանչյուր խաղի համար գլխավոր մրցավարին տալ 1000, եզրային մրցավարներին՝ 500-ական ռուբլի: Դա բարձրագույն խմբում, իսկ 1-ին խմբում համապատասխանաբար 700 եւ 350-ական ռուբլի: Ցավոք, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան հիմա միջոցներ չունի, որ մրցավարների համար ուսումնամարզական հավաք կազմակերպենք, նոր մրցաշրջանին լավ նախապատրաստվելու համար:

Հույս ունենք, որ հովանավորներ կգտնվեն, որոնք օգնության ձեռք կմեկնեն: ■

Մարկո Վան Բաստենը նաեւ ՖԻՖԱ-ի ընտրյալ

Հորանդիայի մայրաքաղաքում տեղի ունեցած հանդիպումը [illegible] արդյունքի ժամանակ [illegible] հարուցվեց, որ Հորանդիայի հավաքականի հանրահայտ հարձակվող Մարկո Վան Բաստենը ՖԻՖԱ-ի կողմից անցկացված հարցման արդյունքներով, որին մասնակցել են 73 երկրների ազգային հավաքականների գլխավոր մարզիչներ, որպես ճանաչվել է 1992 թ. աշխարհի լավագույն ֆուտբոլիստ:

2-րդ անգամն է ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան որոշում լավագույններից լավագույնին: ՖԻՖԱ-ի 1-ին մրցույթում հաղթել էր Գերմանիայի հավաքականի ավագ Լոթար Մաթեուսը:

Ինչպես հայտնի է, Մարկո Վան Բաստենը դեռ անցած տարեվերջին անգլիական «Ուորլդ Սոքր» ֆուտբոլային հանրահայտ ամսագրի կողմից ճանաչվել էր 1992 թ. աշխարհի լավագույն ֆուտբոլիստ, իսկ «Դրանս Ֆուտբոլ» ոչ պակաս հանրահայտ շաբաթաթերթի կողմից եվրոդայի լավագույն ֆուտբոլիստ: Այնպես որ, տարանցաբաս հարձակվողի նման ճանաչումն արդեն պարտադրական լինել չի կարող:

Սա ՖԻՖԱ-ի կողմից ճանաչված 1992 թ. աշխարհի 5 լավագույն ֆուտբոլիստները.

1. Մարկո Վան Բաստեն (Հոլանդիա, «Միլան»)
2. Խրիստո Ստոիչկով (Բուլղարիա, «Բարսելոնա»)
3. Ջոնաս Հեսլեր (Գերմանիա, «Ռոմա»)
4. Ժան Պիեռ Պադեն (Ֆրանսիա, «Միլան»)
5. Բրայան Լաուդրուպ (Դանիա, «Ֆիորենտինա»): ■

Հայաստանի Հանրապետության 1992 թ. ֆուտբոլի 10 լավագույն մրցավարները

1. Հենրիկ Սիարոնյան (Երեւան)
2. Պողոս Բալյան (Երեւան)
3. Անդրանիկ Բոնջուկյան (Վանաձոր)
4. Ստեփան Գեւորգյան (Երեւան)
5. Սողոմոն Զանազանյան (Երեւան)
6. Ավետիս Հովսեփյան (Երեւան)
7. Գեւորգ Հովհաննիսյան (Երեւան)
8. Սլավա Ղազարյան (Երեւան)
9. Ռոբեն Ղազարյան (Երեւան)
10. Արարատ Ճարդարյան (Երեւան)

Թիման-Շորթ

II-րդ դարտիա
Թագուհու գամբիտ

1. d4 d5 2. ∆f4 e6 3. ∆c3 ∆f6 4. cd ed 5. փg5 c6 6. Ցc2 փe7 7. e3 ∆bd7 8. փd3 ∆h5 9. փ:e7 Ց:e7 10. ∆ge2 ∆b6 11. 0-0-0 g6 12. Ub1 ∆g7 13. ∆g3 փd7 14. Uc1 0-0-0 15. ∆a4 ∆:a4 16. Ց:a4 Ub8 17. Uc3 b6 18. Ua3 փe8 19. Ցc2 Uc8 20. Uc1 փd7 21. Ցd2 h5 22. Ub3 ∆e6 23. Ubc3 b4 24. ∆e2 Ցd6 25. h3 Uhd8 26. ∆g1 g5 27. ∆f3 f6 28. U3c2 ∆g7 29. Ua1 փf5 30. ∆e1 Ub7 31. Uc3 փ:d3 32. ∆:d3 ∆f5 33. Ցc2 ∆e7 34. Ցa4 Ua8 35. a3 Ցd7 36. ∆b4 Ub7 37. Ub3 c5 38. Ց:d7+ U:d7 39. dc d4 40. ed U:d4 41. ∆d3 ∆d5 42. Ub1 Ue8 43. cb ab 44. a4 Ua7 45. a5 ba 46. Uc5 ∆b4 47. U:a5+ Ub6 48. ∆:b4 U:b4 49. Uaa3 Ue1+ 50. Uc2 Ue2+ 51. Uc1 Ub5 52. U:b4 U:b4 53. Uf3 Ue1+ 54. Ud2 Ug1 55. Ue2 Uc4 56. U:f6 U:g2 57. Uf1 Uh2 58. Uf3 Uh1+ 59. Ug2 Ub1 60. Uf5 U:b2 61. Uf3 Ub1 62. U:g Uf1 63. Uf5 Ug6 64. Uh5 Uf1 65. U:h4 Ud5 66. Uf4 Ue5 67. Ug2 Ua1 68. Uf8 Ue6 69. h4 Ue7 70. Uf4 Ua8 71. Uh3 Uh8 72. Ug4 Ug8+ 73. Uh5 Ue6 74. Uh6 Ue5 75. Ua4 Ug2 76. f3 Ug3 77. Ue4+ Uf5 78. Ue8 Ug6+ 79. Uh7 Uf6 80. Ug7 Ug6+ 81. Uh7 Uf6 82. Ue7 Ua6 83. Uf7+ Ue6 84. Ug7 Ua1 85. Uf6+, սեւերը հանձնվեցին: ■



Մրցանակային ֆոնդը մեծանում է

Ինչպես եւ պետք էր նպատակել, հավակնորդների եզրափակիչ մրցախաղում անգլիացի Նայջել Շորթի տարած հաղթանակից հետո Լոնդոնը դարձրաստվում է իր թեկնածությունն առաջադրել աշխարհի առաջնության մրցախաղի անցկացման համար: Անգլիայի Ճախմատային ֆեդերացիայից հայտնեցին, որ ցանկանում են Կասպարով-Շորթ մենամարտի հայտ ներկայացնել ՖԻՊԵ առաջարկելով 3 միլիոն 300 հազար ֆունտ ստերլինգի մրցանակային ֆոնդ: Էլ ավելի մեծ գումար՝ 5 միլիոն 600 հազար դոլար, խոստանում է հարավաֆրիկյան բանկիր Եզոհմիր Վասիլեւիչը, որն ինչպես հայտնի է, Ֆիդեր-Սպասկի մրցախաղի հովանավորն էր: Վասիլեւիչն առաջարկում է մենամարտն անցկացնել Բելգրադում, իսկ հնարավոր ասակցությունների դեպքում՝ Սոֆիայում: Ընդ որում, հարավաֆրիկյան մեծահարուստը մտադիր է պատասխանատու հայտ ներկայացնել փետրվարի 7-ին ՖԻՊԵ-ի սահմանած վերջին ժամկետից միայն մեկ օր առաջ:

Ինչպես հայտնեցին Լյուցերնից, բոլոր պահանջներին համապատասխան ձեւակերպված միայն երեք հայտ կա՝ Բելգիայից, Զագրեբից եւ Ջակարտայից: Ա.Հ.

Հետաքրքիր է

Ավտոմոբիլ. գներ առանց սահմանների

Ավտոմեքենա գնողները կկարողանան այսուհետեւ համեմատել գները: Վեց ամիսը մեկ, սկսած 1993 թվականի մայիսից, Եվրոպայում գործող ավտոմոբիլաշինարարները, այդ թվում ճապոնացիները, պետք է հրապարակեն տարբեր երկրներում առկա իրենց ցանկը: Կնշվեն բոլոր տարբերը ներառող գները եւ անտարբ գներն ազգային դրամներով: Այս ձեռնարկման շնորհիվ Բրյուսելում գտնվող Եվրահանձնաժողովը հույս ունի կրճատել Եվրահամայնքի տարբեր երկրներում գոյություն ունեցող գների տարբերությունները: Բանն այն է, որ ներկայումս միեւնույն մոդելի ավտոմոբիլի գների տարբերությունը տարբեր երկրներում կարող է հասնել մինչեւ 50 տոկոսի: Խոսքը հրապարակայնության լոկ առաջին փուլի մասին է, քանզի գործընթացը շարունակվելու է: Ցանկերը կարտացոլեն միայն ամենահաճախ վաճառվող մոդելները: Ներկայումս վաճառողները միշտ չէ, որ հաճույքով են տպահրվում արտասահմանում գնված որեւէ մեքենայի տպասարկումը, իսկ առայժմ Բրյուսելի նախաձեռնությունից կօգտվեն առաջին հերթին սահմանամերձ շրջանների բնակիչները: ■

Լուրերի հոսքից

Թեթեւ ատլետիկա. Մոսկվայում տեղի ունեցած Ջնամենսկի եղբայրների թեթեւատլետիկական հուշամրցաշարում Ռուսաստանի ներկայացուցիչ Իրինա Պրիվալովան 50 մ վազքատարածությունում 2 անգամ գերազանցեց աշխարհի ռեկորդը, որը 13 տարի առաջ սահմանել էր հանրահայտ Մարիտա Կոխը:

Այն հիմա հավասար է 6 վրկի, որը 0.11 վրկով գերազանցում է համաշխարհային նախկին նվաճումը: Որոշակի գաստրոլերներ (Ռուսաստան) ձեռքի ազատակով հաղթահարեց 6 մ բարձրությունը: դա տարվա լավագույն ցուցանիշն է:

Բասկետբոլ. Ռուսական բասկետբոլի վերջին ժամանակներս շարունակ զարմացնել: Այս երկրի տղամարդկանց հավաքականն իրավունք է ձեռք բերել հանդես գալ եվրոպական [illegible] աջակցությամբ [illegible] աշխարհամարտերի [illegible] ազգային թիմերի մրցաշարում [illegible] «էֆիս էնգին»-թիմը [illegible] 96:87 հաշվով հաղթեց բասկետբոլային մեծ ավանդույթներ ունեցող ԲԿՍՍ-ին: ■

Հաղթեց Անատոլի Կարպովը

Շախմատասերները հիանալի գիտեն Հոլանդիայի Վեյկ ան Զեե քաղաքում տեղի ունեցած «Հոգոովեն» անունը կրող ավանդական շախմատային խոշոր փառատոնի գլխավոր մրցաշարի անակնկալ սկիզբը, երբ Անատոլի Կարպովն այն էլ 12-րդ հայրում անճնատոր եղավ Քրիստիանսենին, չնկատելով ֆիգուրի կորուստը, մի բան, որ աշխարհի նախկին չեմպիոնի դրսևորումներում գրեթե գործնականում բացակայում էր: Հետո Կարպովն իր մեջ ուժ գտավ նույն Քրիստիանսենի հետ նախ հավասարեցնել հաշիվը, ապա առաջ անցնել: Հետեւեցին միկրոմրցաշարերում հաղթանակները նաեւ Յոն Նանի եւ Վայերի Սալովի նկատմամբ: Եզրափակիչում Կարպովը 2,5:1,5 հաշվով առավելության հասավ իսպանացի գրոսմայստեր Միգել Իլեսկասի նկատմամբ եւ ոչ միայն տիրեց գլխավոր մրցանակին, այլեւ լրացուցիչ անգամ ապացուցեց շախմատային իր բարձր կարգը:

Զուգահեռ անցկացվող մրցաշարում, որին մասնակցում էին երեւանցի երկու գրոսմայստերներ, Վլադիմիր Հակոբյանը 12 պարտիաներում վաստակեց 7, իսկ Ամբաս Լիսուրյանը 6,5 միավոր: Առաջին մրցանակը նվաճեց Վայերի Սալովը:

Բաժինը վարում է ՍԱՐԳԻՍ ԲԱԴԱԼՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@



Կարծիք

«ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀՈՒ»

Փետրվարի 2-ին Ռուսաստանի արտգործնախարարության մամուլի կենտրոնում կայացած բրիֆինգում նախարարության լրատվության եւ մամուլի դեպարտամենտի տնօրեն Ս. Յասարշեմբսկին տեղի եւ օտարերկրացի լրագրողների համար առանց մեկնաբանության ընթերցեց հետեւյալ հայտարարությունը.

«Մոսկվայում խոր ընդոծումով ընդունվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահի ս. թ. հունվարի 29-ի հայտարարությունը, որ նա արել էր Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի դիմումի առթիվ՝ տնտեսական ծանր իրադրության կապակցությամբ, որ ստեղծվել է մասակարարումների դադարեցման եւ բացառիկ ցուրտ ձմռան հետեւանքով:

Անվտանգության խորհրդի անդամները նշել են, որ Հայաստանի եւ Ադրբեջանի Նախիջեւանի շրջանի տնտեսությունը եւ ինֆրակառուցվածքը փաստորեն շարքից դուրս են եկել: Ստեղծվել է սովի իրական սպառնալիք: Այն բոլոր երկրներին, որոնք հնարավորություն ունեն, կոչ է արվել թեթեւացնել վառելանյութերի մատակարարումն եւ մարդասիրական օգնության կազմակերպման գործը: Շրջանի երկրների կառավարություններին կոչ է արվել թույլատրել այդ մատակարարումների ազատ մուտը Հայաստան եւ Նախիջեւան:

Չնայած Անվտանգության խորհրդի նախագահի հայտարարության արտակարգ զգույշ տոնին, չի կարելի լռության մատնել այն փաստը, որ այդ հարցն առաջացել է ոչ թե ինչ-որ տարերային աղետի, այլ Լեռնային Ղարաբաղի շուրջ արդեն 5 տարի շարունակվող անողոք ազգամիջյան կոնֆլիկտի հետեւանքով: Մեկ անգամ չեն ձեռք բերվել կրակի դադարեցման պայմանավորվածություններ ու համաձայնագրեր: Բայց կոնֆլիկտը ուժով լուծելու ջատագովները խափանել են դրանք ու շարունակում են սրել իրադրությունը, ստեղծելով, հաճախ ակնհայտորեն արհեստականորեն, խաղաղ կարգավորման արգելքներ: Ցավոք, կոնֆլիկտի մասնակիցների իշխանական կառուցվածքները չդրսեւորեցին վեճի լուծման խաղաղ կերպ, բանակցական մեթոդների անցնելու համար անհրաժեշտ քաղաքական կամք: Առնչվելով Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահների ս. թ. հունվարի 3-ին արած համատեղ հայտարարությանը, հակամարտող կողմերի ղեկավարներն այդուհանդերձ փաստորեն անտեսեցին նրանց կոչը՝ գործնական քայլերով հավաստելու կոնֆլիկտը խաղաղական միջոցներով լուծելու ձգտման վերաբերյալ իրենց հայտարարությունները: Այսօր էլ չկա այն թեւասաղ հարցի պատասխանը, թե ինչու ռազմական գործողությունների ու կեղծ բանակցությունների, հրեսակոծությունների ու շրջափակումների խաղաղասիրության համար ոչեմ է տառապեն խաղաղ բնակչությունը, շրջանի ժողովուրդները»:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐՊԵՏՅԱՆ
մեր սեփ. թղթ., Մոսկվա

«Արամ Խաչատրյան» ֆիլհարմոնիկ սրահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

68-րդ համերգաշրջան, 4485-4486 հայոց թվական

Համերգաշրջանի հովանավորն է
Հայկական բարեգործական ընդհանուր միությունը

7 փետրվարի

Նվիրվում է Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին

ՍԵՐԳԵՅ ՊՐՈԿՈՖԵՎ — Դրվագներ «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետից

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ — Ռապսոդիա դաշնամուրի եւ նվագախմբի համար (Սուրեն Վարդանյան)

ԴՄԻՏՐԻ ՇՈՍՏԱԿՈՎԻՉ — Սիմֆոնիա թիվ 10

Գեղարվեստական ղեկավար
եւ գլխավոր դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Սկիզբը ժամը 14.00

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում

Մեկնաբանություն

Սեւծովյան նավատորմի հարցը անկայունության գլխավոր գործոն

Սեւաստոպոլում քաղաքական անկայունությունը կապված է այն բանի հետ, որ մինչ այժմ Ուկրաինան եւ Ռուսաստանը չեն ստորագրել Եղցինի եւ Լեռնային Կրասնոկուտսկի Յալթայի բանակցությունների համաձայնագրերի մեծ մասը: Այդ մասին ուկրաինական հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել է Ուկրաինայի ռազմածովային նավատորմի շտաբի զինծառայողների սոցիալական ապահովության բաժնի վարիչ Վադիմ Սլավյանովը:

Նրա խոսքերով, մինչ այժմ նույնիսկ պատրաստ չեն Սեւծովյան նավատորմի կարգավիճակի մասին փաստաթղթերը անցումային շրջանի համար եւ չի լուծվել միացյալ հրամանատարության հարցը: Արդյունքում հարցեր են ծագում գործող եւ կառուցվող նավերի նյութատեխնիկական - առողջապահական գործում:

Վ. Սլավյանովը ընդգծել է, որ չնայած Ռուսաստանի եւ Ուկրաինայի պայմանավորվածություններին, ըստ որոնց նրանք համաչափ կերպով պետք է ֆինանսավորեին Սեւծովյան նավատորմը, միջոցները հատկացվում են միայն Ուկրաինայից: 1992 թ. Կիեւը Սեւծովյան նավատորմի վրա ծախսել է 10 միլիարդ կարբովանեց: «Եթե Ռուսաստանը նույնքան ֆինանսավորեր նավատորմին, նշել է Սլավյանովը, առյա հինգ միլիարդ կարբովանեց այդ գումարից կծախսվեր նավաստիների համար բնակարաններ կառուցելու վրա:» ■

Մոսկվա

100 մլն ռուբլի Աբխազիայի փախստականներին

Ռուսաստանի ԳԽ-ն 100 միլիոն ռուբլի է հատկացրել Աբխազիայից փախստականներն օգնելու համար, որոնք ժամանակավոր աղաստան են գտել Սոչիում: Այսօր Սոչիի առողջարաններում եւ հանգստյան տներում աղաստան են գտել մոտ 20 հազար փախստականներ: Եւս 10 հազար մարդ կանգ են առել գյուղական շրջանների սեփական տներում:

«Հատկացված ամբողջ գումարով կվճարենք փախստականների բնակարանների վարձն ու սննդի ծախսերը», ՌԼԳ-ի բոլորկցին հայտնել է Սոչիի քաղխորհրդի նախագահ Յուրի Պոլյակովը: Նրա խոսքերով, դրանի մի մասը որոնես նոպաս կտրվի փախստականներին, մի քանի միլիոն ռուբլի էլ կտրվի այն ադիգեյական, վրացական եւ հայկական գյուղերին, որտեղ բնակվում են փախստականները: ■

Բանկաներ

Բոսնիայի ճգնաժամը հաղթահարելու նոր նախաձեռնություն

Ռուս դիվանագետները, հնարավոր է, հանդես կգան Բոսնիայի ճգնաժամի խաղաղ կարգավորման նոր նախաձեռնությամբ: Ինչպես ՌԼԳ-ի թղթակցին հայտնի է դարձել դիվանագիտական աղբյուրներից, դրա էությունը Բոսնիա-Հերցեգովինայի նոր եռակողմ վարչակարգի ընտրությունն է:

Սարաեւոյի չդադարող մարտերը գտնվում են համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում: Կրակի դադարեցման իրենց տարբերակներով հանդես կգան ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի դիվանագետները: Նրանք ընդունում են Բոսնիա-Հերցեգովինա 20 հազար զինվորներ ուղարկելու հնարավորության հարցը, որոնք պետք է նրա շուրջը «անվտանգության գոտի» ստեղծեն: ■

Թրիլիսի

Պետությանը պակաս է վճարվել 3.5 մլն դոլլար

Վրաստանում «Վրացնավթամթերք» կոնցեռնի ղեկավարներից մեկի մեղեւայության հետեւանքով պետությանը որոնես հարկ պակաս է վճարվել 3.5 մլն ամերիկյան դոլլար: Վրաստանի ներքին գործերի վարչության աշխատողները հանցագործություն են բացահայտել այդ գործարքում: Ստուգման ընթացքում պարզվել է, որ 1992 թ. ապրիլ-հունիսին «Վրացնավթամթերք» կոնցեռնի առաջին փոխնախագահ Վալերի Կոտրիկաձեն առանց հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելու վրաց-կիպրական «Բաստեյ» համատեղ ձեռնարկությունը վաճառել է 30 հազար տոննա դիզելային վառելիք, որը ձեռնարկությունն արտահանել է եւ իրացրել արտասահմանում: Վաճառքից ստացված 3.5 մլն դոլլարը Կոտրիկաձեն ապօրինաբար փոխանցել է Կանադայի եւ Ավստրիայի երկու մասնավոր ֆիրմաների հաշիվներին, դա չարձանագրելով կոնցեռնի հաշվետվություններում: ■

Անդրզինջուրգի շտաբը Թբիլիսիից կտեղափոխվի Գյումրի: Խորհրդապահական (չստուգված) աղբյուրների տեղեկություններ համաձայն, Ռուսաստանի զորքերի Անդրկովկասյան զինվորական օկրուգի շտաբը մոտ ժամանակներս կտեղափոխվի Հայաստան, ամենայն հավանականությամբ Գյումրի: ՆՏ

Խարկով

Մախնոն հրդեհում է հայացքով

Խարկովի մարզի ավաններից մեկի մի բնակարանում, ըստ ՌԼԳ-ի լրատվության, տարօրինակ դեպքեր են տեղի ունենում. հանկարծ գորգի վրայով կրակ է վազում, բոցավառվում է թաց սրբիչը, իսկ մի քանի օր անց, դաշտգամբում չորացող մի վալաս: Ենթադրություններ են եղել, թե հրդեհները վտրիկ Մախնոն չարամտության հետեւանք են: Հետո, երբ մի օր էլ հրդեհվեց բնակարանը, հրշեջները սկսեցին կասկածել տան տերերին, իբր ապահովագրական գումար ստանալու համար: Բայց իսկապես պարզվեց, որ բնակարանն ու գույքը ապահովագրված չեն եղել, իսկ Մախնոն լուցկիներով չի խաղացել: Չբացահայտված թաղող օբյեկտների հարցերով զբաղվող մասնագետների (ուֆոլոգ) կարծիքով, տան մեծ քանակությամբ էներգիա է հավաքել, ինչը դարձել է հրդեհների պատճառ: «Յուրաքանչյուր ընտանիքում ստեղծվում են հատուկ բիոէներգետիկ օրիքներ, կարծում է ուֆոլոգ Գ. Սերաֆիմովը: Դեռեւս հայտնի չէ, թե ինչի շնորհիվ է կուտակվում պոտենցիալի էներգիա: Սակայն տվյալ դեպքում ստացվել է այնպես, որ Մախնոն բարձր էներգետիկան պոտենցիալ է պատրաստում եւ սկսում է նրան երեսակվել»: ■

Լուրերի հոսք

«ՅՈՒՆԵՍԿՕ-Չեռնոբիլ» ծրագիր

Մինչեւ է ժամանել «ՅՈՒՆԵՍԿՕ-Չեռնոբիլ» ծրագրի համակարգող Բրունո Լեֆեւրը: ՌԼԳ-ին տված հարցազրույցում նա նշել է, որ սկսվում է «այդ ծրագրի գլխավոր նախագծի կոնկրետ իրագործումը»: Այն նախատեսում է ինչպես ադեսի ֆիզիկական ու սոցիալական հետեւանքների վերացման միջոցառումներ, այնպես էլ Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի վարակված գոտիների տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրումներ: Լեֆեւրը հայտնել է, որ Բելառուսում սկսվում է երեխաների վերականգնողական երկու կենտրոնների կառուցումը: Այնուհետեւ նման կենտրոններ կկառուցվեն Ուկրաինայում եւ Ռուսաստանում:

Անատոլի Լուկյանովը սմոլենսկցիների պատվիրակ

Սմոլենսկի մարզի կոմունիստական կազմակերպությունների կուսակցական խորհրդաժողովում այլ հարցերի թվում քննարկվեց Ռուսաստանի կոմկուսի հերթական համագումարի պատվիրակների հարցը, որը նախատեսվում է անցկացնել փետրվարի 13-ին Մոսկվայում: Համագումարի հինգ պատվիրակների թվում առաջինը նշվեց սմոլենսկցիների համերկրացի Անատոլի Լուկյանովի անունը:

Ազգամիջյան խնդիրների «կլոր սեղան»

Երեքշաբթի օրը Մոսկվայում լրագրողների մասնակցությամբ կայացած «կլոր սեղան»-ի հանդիպման ժամանակ Ռուսաստանի փոխվարչապետ Ս. Շախրայը ընդգծեց, որ «չի կարելի խոսել Ռուսաստանի ղեկավարության ազգային հաղթականության բացակայության մասին»: «Այդ հաղթականությունն առկա է եւ արտահայտված է երկրի գործադիր եւ օրենսդիր իշխանության փաստաթղթերում», ասել է նա: Միաժամանակ Շախրայը ընդգծել է, որ «իշխանության ազգային հաղթականությանն առնչվող տարբեր ծյուղերի մրցակցությունն անքննարկելի է»:

Փյանջում սպանվել է մի սահմանախախտ

Մի խումբ աֆղանցիներ, որոնք փետրվարի 2-ին փորձել են Տաջիկստանի սահմանը խախտել Փյանջ գետի տեղամասում, ավտոմատներից կրակ են բացել սահմանապահ ջոկատի վրա, «ԻՏ»-ին հայտնել է Ռուսաստանի սահմանապահ զորքերի լրատվական կենտրոնը: Պատասխան կրակով ռուս սահմանապահները սպանել են սահմանախախտներից մեկին: Մյուսները ետ են վերադարձել Աֆղանստան:

Ռուսաստանը պատրաստ է համաձայնագրին

Ռուսաստանը պատրաստ է Ուկրաինայի հետ համաձայնագիր կնքել կրկնակի հաղթահարման մասին, ՌԼԳ-ին հայտարարեց Ուկրաինայի հետ վարվող բանակցություններում Ռուսաստանի ռազմական պատվիրակության ղեկավար Յուրի Դուբինինը: Երկու երկրների օրենսդրությունները նախատեսում են նման հնարավորություն, նշեց ռուս դիվանագետը: Նրա կարծիքով, «դա իրական խնդիր է, որը հարկավոր է լուծել անհապաղ»: ■

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային ստուգածը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորումն եւ տարատեսակների հեղինակ ՊՈՒԼ ՂՈՒԼԼԱՔՅԱՆ

Հրատարակչի խորհրդի նիստերի արձանագրություն «Հարթրեյտեր» հրատ. տպարան, Երեւան 23 Արովյանների 2 Տրանշեան թիւ 65 Դասակ 68149 Տպաքանակ 20 000 Պատուեր 1441 Ստորագրված է տպագրության 3.2.1993

digitised by A.R.A.R.@